

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ  
ԵՎ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**

**ԲԱԿԱԼԱՎՐԻ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ  
սովորող ուսանողների համար  
(Առկա ուսուցում)**

**ԵՐԵՎԱՆ – 2018**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ.....</b>	<b>3</b>
<b>ԲԱԺԻՆ I.</b>	
<b>1. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ .....</b>	<b>6</b>
<b>2. ՀՀ ԿԳՆ. Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ .....</b>	<b>21</b>
<b>ԲԱԺԻՆ II.</b>	
<b>ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.....</b>	<b>37</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և փարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշների համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուսարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուսարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական հետազոծերի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջու-

թյամբ համապետելի է Կրեդիտների կուրսակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեզ համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեզ համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝  Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

**II ԲԱԺԻՆ**  
**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Մաս I.**  
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում՝ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության գծով:

## 1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	36	11
<i>Պարտադիր</i>	32	10
<i>Կամընտրական</i>	4	2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	10	4
<i>Պարտադիր</i>	8	3
<i>Կամընտրական</i>	2	1
Ընդհանուր մասնագիտական	152	35

կուրսային աշխատանքներ	4	2
Հատուկ մասնագիտական դասընթացներ	18	6
Կրթական այլ մոդուլներ	24	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>240</b>	<b>79</b>

Ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը ծրագրում ըստ ուսումնական տարիների սահմանափակված է հետևյալ չափաքանակներով.

1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի
<b>30 ժամ*</b>	<b>30 ժամ*</b>	<b>26 ժամ</b>	<b>24 ժամ</b>

*\* Առանց ֆիզասպորտական ժամերի հաշվառման*

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 20-շաբաթյա տևողությունը, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգարքներ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10 % թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 240 կրեդիտի:

## 2. Ծրագրի բովանդակությունը.

### 2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական

## կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

### ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) <sup>1</sup>	Կիսամյակ	Գնահատման ձևը
1703/Բ01	Ռուսաց լեզու -1	4	60(0/60/0)	1	ստուգարք
1703/Բ02	Ռուսաց լեզու -2	4	60(0/60/0)	2	ստուգարք
1603/Բ01 1604/Բ01 1608/Բ01	Օտարլեզու-1 <sup>2</sup>	4	60(0/60/0)	1	ստուգարք
1603/Բ02 1604/Բ02 1608/Բ02	Օտարլեզու-2	4	60(0/60/0)	2	ստուգարք

<sup>1</sup>Այսուհետ՝ ղ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

<sup>2</sup>Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն



1603/Ք03 1604/Ք03 1608/Ք03 1703/Ք03	Լրացուցիչ լեզվական դասընթաց (Ռուսաց լեզու-3 կամ օտար	4	60(0/60/0 )	3	Առ.ընթ.գ ն.
1106/Ք01	Հայոց պատմության հիմ-	2	30 (24/6/0)	1	ստուգար ք
1106/Ք02	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	30 (24/6/0)	2	Առ.ընթ.գ ն.
1401/Ք01	Հայոց լեզու և գրականություն-1	2	60 (30/6/24)	1	ստուգար ք
1401/Ք01	Հայոց լեզու և գրականություն-2	2	60 (30/6/24)	2	Առ.ընթ.գ ն.
1302/Ք01	Փիլիսոփայության հիմունքներ	4	60 (46/14/0)	4	Առ.ընթ.գ ն.
0001/Ք01	Ֆիզդաստիարակու թյուն	-	120 (0/120/0)	1,2,3,4	ստուգար ք

### ՀԱՏ կամընտրական դասընթացներ

ՀԱՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Թվանի 2	Մոդուլ-դասընթաց	Կրե դի տ	Լսարանայի ն ժամ (դ/գ/լ)	Կիսամ յակ	Գնահա տման ձևը
1001/Ք0 1	Տնտեսագիտություն	2	30 (30/0/0)	4	ստուգար ք
1202/Ք0 1	Քաղաքագիտություն				ստուգար ք

1901/Բ0 1	Իրավագիտություն				ստուգար ք
1107/Բ0 1	Մշակութաբանություն	2	30 (30/0/0)	3	ստուգար ք
2101/Բ0 1	Կրոնների պատմություն				ստուգար ք

## 2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

### ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները.

վանիշ	Մոդուլ- դասընթաց	Կրե- դիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամ- յակ	Գնահատ- ման ձևը
0303/Բ01	Համակարգչից օգտվելու հմտու- թյուններ	2	30 (6/24/0)	1	ստուգարք
0002/Բ01	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ հրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4	60 (30/30/0)		ստուգարք
0708/Բ01	Էկոլոգիայի բնապահպա- նության հիմունքներ	2	30 (30/0/0)	1	ստուգարք

## ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
0102/Բ01	Մաթեմատիկայի հիմունքներ	2	30 (30/0/0)	1	ստուգարք
0404/Բ02	Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ				ստուգարք

### 2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

#### 1.«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտություն

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(դ/գ/վ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
2801/B01	Տարիքային մանկավարժություն	4	60(60/0/0)	1	Եզ. գն.

2801/ B02	Մանկավարժության տեսություն-1	4	60 (48/12/0)	1	Եզ. գն.
2801/ B03	Սոցիալական քաղաքականություն	4	60 (48/12/0)	1	Առ. եզ. գն.
2801/ B04	Մանկավարժության տեսություն-2	5	60(46/14)	2	Եզ. գն.
2801/ B05	Ժամանցի մանկավարժություն	4	60(0//0)	2	Առ. եզ. գն.
1306 B06	Սոցիալական մանկավարժության հիմունքներ	4	60(46/14/0)	2	Եզ. գն.
2801/ B07	Տարիքային անստորմիա, ֆիզիոլոգիան հիգիենա	4	60(46/14/0 )	2	Առ. եզ. գն.
2801/ B08	ՀՀ կրթության համակարգը	4	60(46/14/0 )	3	Եզ. գն.
1407/ B09	Գեղագիտականը և հասարակական գիտակցությունը	4	60(46/14/0 )	3	Առ. եզ. գն.
2801/ B10	Մանկավարժական ինովացիոն	4	60(46/14/0 )	3	Առ. եզ. գն.
0707 B11	Գենետիկա	4	60(60/0/0)	3	Առ. եզ. գն.
2801/ B12	Սոցիալական մանկավարժություն	4	60(0/0/0)	3	Առ. ընթ.
2801/ B13	Մանկավարժական աքսեոլոգիա	5	60(46/14/0)	3	Եզ. գն.
2801/ B14	Մանկավարժական անստորագրություն	4	60 (46/14/0)	4	Եզ. գն.
2801/ B15	Մանկավարժական կոնֆլիկտաբանություն	2	30 (24/6/0)	4	Առ. եզ. գն.
2801/ B16	Շտրկոլոգիական մանկավարժություն	6	90 (60/30/0)	4	Եզ. գն.

2801/ B17	Սոցիալական մանկավարժության պատմություն	4	60 (46/14/0)	4	Առ. ընթ..
1308/ B18	Տարիքային հոգեբանություն	4	60 (46/14/0)	4	Առ. ընթ.. գն.
2801/ B19	Հոգեբանամանկավարժական ախտորոշում	5	60 (46/14/0)	4	Եզ. գն.
1401/ B20	Համագործակցության մանկավարժություն	4	60 (48/12/0)	5	Առ. ընթ.
2801/ B21	Խոսքի մշակույթի հիմունքներ	4	60 (46/14/0)	5	Առ. եզ.. գն.
2801 B22	Կրթական տեխնոլոգիաներ	4	60(46/14/0 )	5	Եզ. գն.
2801/ B23	Դպրոցի կառավարման հիմունքներ	4	60 (46/14/0)	5	Առ. եզ.. գն..
2801/ B24	Մանկավարժական քվալիմետրիկա/որակաչափում/	5	60 (46/14/0)	5	Առ. ընթ.. գն.
2801/ B25	Բժշկագիտության հիմունքներ	4	60 (46/14/0))	5	Առ. ընթ.
28012 B26	Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա	4	60 (60//0)	5	Եզ. Գն.
2801 B27	Դաստիարակությունը քրեակարարողական հիմնարկներում	4	45 (45/0/0)	6	Առ. ընթ. գ ն.
2801/ B28	Արվեստի մանկավարժություն	4	60(46/14/0 )	6	Առ. Եզ. գն.
22/02/ B29	Մանկավարժական վալեոլոգիա	4	60(46/14/0 )	6	Եզ. գն.
2801/ B30	Մանկավարժական վարպետություն և էթիկա	4	60(46/14/0 )	6	Առ. եզ. գն.

2801/ B31	Սոցիալական և կրթական հաղորդակցում	5	60 (46/14/0)	6	Առ. ընթ..
2801/ B32	Մանկավարժական ռիսկաբանություն	4	60(46/14/0 )	6	Եզ. գն.
2801/ B33	Սոցիալական վիճակագրություն	4	45(45/00/ 0)	6	Առ. եզ. գն.
2801/ B34	Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում	4	60(0/0/0)	7	Առ. ընթ. գն.
2801/ B 35	Համեմատական մանկավարժություն	4	45 (0/0/0)	7	Առ. եզ. գն.
2801/ B 36	Երջանկության մանկավարժություն	4	45 (0/0/0)	7	Առ. եզ. գն.
2801/ B 37	Ընտանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներ	4	60(46/14/0 )	7	Առ. ընթ..
2801/ B 38	Էթնոմանկավարժություն	4	60(46/14/0 )	7	Առ. ընթ..
2801/ B 39	Մանկավարժական կանխարեւում	4	60(46/14/0 )	7	Առ. եզ. գն.
2801/ B 40	Սոցիալական հոգեբանություն	4	60(60/0/0 )	7	Առ. եզ. գն.

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2-ական կրեդիտ աշխատաձևավորվ կուրսային 2 աշխատանքների կատարում, որոնց արդյունքների ստուգումը իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով):

## 2.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

### 1.«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտություն

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Կուրսային աշխատանք	2	5	Առ.ընթ.գն.
Կուրսային աշխատանք	2	7	Առ.ընթ.գն.
Պրակտիկա (արտադրական) 4 շաբաթ	4	7	Առ.ընթ.գն.
Ավարտական աշխատանք	12	8	Առ.ընթ.գն.

**Մաս II.**

**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ**



## 1. Տեղեկագրի նպատակը

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է **Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում** իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայնհանրությանը մատչելի դարձնելու համար նպարտանակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված ելքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## 2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

### 2.1. Պարտադիր դասընթացներ

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության համար

1401/Բ01. Հայոց լեզու և գրականություն – 1 (2 կրեդիտ)

*Շարքական 2 ժամ, 6 ժամ դասախոսություն*

*1-ին կիսամյակ, սրուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին.
2. կտիրապետի իր մասնագիտական բառապաշարին, տերմինաբանությանը.
3. կկարողանա կատարել լեզվական և գրականագիտական վերլուծություններ, գրական հայերենով շարադրել մտքերը:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Թեմա 2. Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: Թեմա 3. Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Հայերենի ուղղագրության սկզբունքները: Թեմա 4. Բառագիտություն. բառերի ձևաիմաստային խմբերը: Թեմա 5. Բառապաշար. Դասակարգման սկզբունքները. մասնագիտական բառապաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: Թեմա 6. Հայերենի գործառական ոճերը: Թեմա 7. 5-րդ դարի հայ պատմագրությունը: Թեմա 8. Հայ հին և միջնադարյան քնարերգությունը: Գրական երկերի վերլուծություն:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թելադրության դրական գնահատականի դեպքում՝ եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

## **1401/Ք02. Հայոց լեզու և գրականություն – 2 (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, (6 ժամ դասախոսություն,*

*2-րդ կիսամյակ, Եզ.գն.քնն /հանրագումարային քննություն/*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

### **Կրթական արդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին.
2. կկարողանա ճիշտ գործածել քերականական ձևերը, գործնականում կկիրառի ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները. կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ.
3. կկարողանա կատարել լեզվական և գրականագիտական վերլուծություններ:

### **Բովանդակությունը**

Թեմա 1. Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Թեմա 2. Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Թեմա 3. Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Թեմա 4. Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնությանն ու խնդրառությանը առնչվող սխալների վերացում: Թեմա 5. Պարզ նախադասություն: Թեմա 6. Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Թեմա 7. Ուղղակի և անուղղակի խոսք: Թեմա 8. Ժամանակակից հայերենի կետադրությունը: Թեմա 9. Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն: Թեմա 10. Ճարտասանական հմտություններ. բանավեճի արվեստ. երկխոսության վարում և կառավարում: Թեմա 11. Հայ նոր գրականության

սկզբնավորումը: 19-20-րդ դարերի հայ գրականությունը: Թեմա 12. Հայ նորագույն և արդի գրականություն: Գրական երկերի վերլուծություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունն անցկացվում է բանավոր, որից առաջ ուսանողները գրում են քննական թելադրություն (3 միավոր): Մնացած 17 միավորը բաշխվում է հետևյալ ձևով: Բանավոր քննության հարցատոմսը պարունակում է երկու տեսական հարց և մեկ գործնական առաջադրանք՝ համապատասխանաբար 6, 6, 5 միավոր արժեքով:

**1703/Բ01. Ռուսաց լեզու-1 (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի տիրապետումը ռուսաց լեզվի համակարգին, ապահովել բանավոր խոսքի և երկխոսության կառուցմանունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ռուսաց լեզվի քերականական կառուցվածքին,
2. կկարողանա ճիշտ կազմել իր բանավոր խոսքը,
3. կկարողանա մասնակցել երկխոսությունների,
4. կկարողանա վերլուծել, մեկնաբանել և վերարտադրել լեզվարվեստական և ճանաչողական բնույթի տեքստ:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Թեմա 2. Բառագիտություն. պատկերացում բառիմաստի մասին, բառային միավորների հարաբերակցության ձևերը. Թեմա 3. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/,

խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Թեմա 4. Շարահյուսություն. Շարահյուսական միավորները /բառակապակցություն, պարզ նախադասություն/, նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակները ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:

### **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

### **1703/Բ05. Ռուսաց լեզու-2 (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք  
2-րդ կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ռոժուսաց լեզվի ոճողագրության հիմնական սկզբունքները և կանոնները,
2. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաՍՇԿՅ համակարգին,
3. կտիրապետի մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքներին,
4. կկարողանա վերարտադրել մասնագիտական տեքստը, նաև ներկայացնել նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ,
5. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: Թեմա 2. Զևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևա-

կանականկազմը: Թեմա 3. Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Թեմա 4. Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Թեմա 5. Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

### **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքը անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

#### **1703/Բ15. Ռուսաց լեզու-3 (Լրացուցիչ դասընթաց) (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*3-րդ կիսամյակ, քննություն*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ զարգացնելով ուսանողի լեզվային հմտությունները, ապահովել նրա տիրապետումը մասնագիտական լեզվին և ազատ օգտվելը մասնագիտական գրականությունից:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Ազատ կտիրապետի մասնագիտական լեզվի տերմինաբանային համակարգին,

1. կկարողանա մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր
2. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով,
3. կկարողանա կազմել զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով
4. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստեր տարբեր բարդության:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական:

Թեմա 2. Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները:  
Թեմա 3. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. Թեմա 4. Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:

**Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:

**1603/Բ12. Անգլերեն -1 (4 կրեդիտ)**

*Շարքաթական 4 ժամ գործնական պարապմունք  
1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհարստացնի ակտիվ և ներզոր բառապաշարը,
2. կսովորի անգլերենի քերականության հատուկ բարդություն ունեցող երևույթները,
3. ձեռք կբերի անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: Թեմա 2. Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): Թեմա 3. Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): Թեմա 4. Առա-

ջարկվող թեմաներ. ընտանիք, ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ, իմ հետաքրքրությունները, ճանապարհորդություն, երազանքներ, իմ ապագա մասնագիտությունը, շրջակա միջավայր և նրա պահպանումը, հանրամշակութային երևույթներ և այլն:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**1603/Բ13. Անգլերեն-2 (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*2-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա համակարգել նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա,
2. կունենա անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ,
3. կկարողանա ընկալել ունկնդրված/կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից,
4. կտիրապետի տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին:

**Բովանդակությունը**

Թեմա 1. Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: Թեմա 2. Բառապաշար, բառա-



կազմություն. Վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: Թեմա 3.Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: Թեմա 4.Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: Թեմա 5. Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**1603/Բ15. Անգլերեն– 3 (Լրացուցիչ դասընթաց) (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*3-րդ կիսամյակ, քննություն*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է նոր, առավել հագեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա հասկանալ և ամբողջապես ըմբռնել լսված նյութի հիմնական բովանդակությունը,
2. կտիրապետի անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններին,
3. կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը հայերենից անգլերեն և հակառակը,
4. կկարողանա ինքնուրույն կազմել կապակցված տեքստ մասնագիտական թեմայով:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Բառապաշար (ոեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ,

հականիշներ, նոր բառակապակցություններ: Թեմա 2.Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: Թեմա 3. գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: Թեմա 4. Առաջարկվող թեմաներ՝ սերունդների հակասություն, հոգևոր և մշակութային արժեքներ, 21-րդ դար՝ նոր մարտահրավերներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում, հայրենիք և հայրենասիրություն և այլն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:

**1604/Բ01. Գերմաներեն-1 (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժ. Գործնական պարապմունք*

*1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ համակարգել իրենց նախնական գիտելիքները գերմաներեն լեզվի հնչյունաբանության, քերականության և բառագիտության բնագավառներում և այդպիսով ստեղծել անհրաժեշտ հիմք՝ լեզվի ուսումնասիրության հաջորդ փուլերի համար:

**Կրթականարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կյուրացնի գերմաներեն իհնչյունական կողմի հիմնական առանձնահատկությունները,
2. Կտիրապետի ծրագրով նախատեսված առաջին փուլի համար անհրաժեշտ նվազագույն բառապաշարին,
3. Կյուրացնի նշված փուլի համար անհրաժեշտ քերականական նյութը:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Գերմաներենի արտասանական նորմերը: Արտասանություն և գրություն: Հնչյունաբանական տառադարձություն: Գերմաներենի ձայնավորական և բաղաձայնական համակարգերը: Թեմա 2.

Քերականական կարգեր, դրանց արտահայտման միջոցները գերմաներենում: Գոյականի, ածականիևբայի ձևաբանական և քերականական նշանակությունները: Գոյականի հոլովման տիպերը: Հոլովների նշանակությունը և գործածությունը: Համեմատության աստիճանների կարգ: Լիմաստ և սպասարկու բայեր: Նախդիրների գործառույթը նախադասության մեջ: Թեմա 3. Պարզ նախադասություն, դրա շարադասությունը: Ուղիղ և շրջուն շարադասություն: Թեմա 4. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է հետևյալ թեմաները՝ «Ընտանիք», «Իմ մասնագիտությունը», «Համալսարան», «Իմ հանգստյան օրը», «Ճանապարհորդություն», «Գերմանիա»:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

### **1604/Բ13. Գերմաներեն-2 (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժ. Գործնական պարապմունք*

*2-րդ կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ զարգացնել ուսման առաջին փուլում ձեռքբերած գիտելիքները գերմաներենի ձևաբանության և քերականության բնագավառներում, ինչպես նաև ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը՝ համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրման նպատակով:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. գործնականում կկիրառի գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում,
2. կտիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին, որը վերաբերում է մասնագիտական ոլորտին,
3. կվարի երկխոսություններ, կկատարի համապատասխան տեքստերի վերարտադրություն և կգրի փոխադրություններ:

## **Բովանդակությունը.**

Թեմա 1. Գոյականի նշանակությունը և շարահյուսական գործառույթները: Հոգնակի թվի կազմության հիմնված տիպերը: Անհոգնական և անեզական գոյականներ: Գոյականների հոլովման համակարգը և գերմաներենի հոլովների կիրառական նշանակությունները: Թեմա 2. Բայերի ձևաբանական և իմաստաքերականական դասակարգումը: Սուբյեկտիվ և օբյեկտիվ բայեր: Անցողական և անանցողական, երկսեռբայեր: Բայի քերականական կարգերը: Թեմա 3. Նախադասությունների դասակարգումը ըստ հնչերանգի և ըստ կազմության: Միավորյալ նախադասություններ: Ստորոգյալի համաձայնեցումը ենթակայի հետ: Թեմա 4. Թեմատիկ բառապաշարը ընդգրկում է «Գերմանիայի մեծ քաղաքները», «Ընկերական շրջապատում», «Տնտեսություն և քաղաքականություն», «Իմ զբաղմունքը», «Հայաստանի պատմությունից», «Համագործակցություն» և այլն:

## **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

## **1604/Բ15. Գերմաներեն-3 (4 կրեդիտ)**

*Ճաբաթական 4 ժ. գործնական պարապմունք*

*3-րդ կիսամյակ, քննություն*

## **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ամբողջացնել բակալավրատի ընդհանուր կրթական մակարդակում ուսանողների գիտելիքները գերմաներեն լեզվից և ապահովել անհրաժեշտ գիտելիքներ համապատասխան մասնագիտական գործունեության համար:

## **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կկարողանա կարդալ, ընկալել, վերարտադրել և թարգմանել ինչպես ընդհանուր հաղորդակցական նշանակության, այնպես էլ նեղ մասնագիտական բնույթի տեքստեր: Այստեղ նկատի է առնվում նաև ուսանողի հաղորդակցական կարողությունների զարգացումը՝ երկխոսությունների, պատումների և

հարցադրումների նյութի վրա:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Սահմանական եղանակի ակտիվ և ներգործական սեռերի բոլոր ժամանակների կազմությունն ու գործառույթը: Ժամանակաձևերի բացարձակ և հարաբերական գործառույթը: Թեմա 2. Հրամայական եղանակի ձևերը և նրանց քերականական հոմանիշները: Երկանդամ, եռանդամ և միանդամ կրավորական կառույցները: Թեմա 3. Բայական և անվանական ստորոգյալի տարբեր տեսակները: Պատճառի, նպատակի, պայմանի պարագաների արտահայտության միջոցները: Ընդարձակ հատկացուցիչ: Բարդ ստորադասական նախադասությունների բոլոր տեսակները: Ուղղակի և անուղղակի խոսք պարունակող նախադասություններ:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անձանոթ տեքստը մասնագիտական թեմայով; երկրորդ առաջադրանքն է՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը; երրորդ առաջադրանքն է՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

## **1608/Բ12. Ֆրանսերեն-1**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*1-ին կիսամյակ, ստուգարք*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական ֆրանսերեն(Français professionnel) հումանիտար և սոց. գիտությունների ֆակուլտետներում, (ուսանողները հանձնել են ֆրանսերեն լեզվի ընդունելության քննություն), ինչպես նաև ընդհանուր ֆրանսերեն (Français général) տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում, որտեղ (ուսանողները չեն հանձնել ֆրանսերեն լեզվից ընդունելության քննություն):

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի ֆրանսերենի քերականության հիմնական

- դրույթներին և բառային ֆոնդին,  
2. կծանոթանա մասնագիտական ֆրանսերենի գրավոր և բանավոր խոսքի հիմունքներին:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1.Ֆրանսերենով մասնագիտական ընթերցանության հմտությունների ձևավորում:Թեմա 2.Մասնագիտական ընթերցանության տիրույթում գլխավոր և աջակցող մտքերի տարբերակում և ուսուցում: Թեմա 3.Հիմնական տերմինների ուսուցում:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

### **1608/Բ13. Ֆրանսերեն-2**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք  
2-րդ կիսամյակ, ստուգարք*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական ֆրանսերեն(Français professionnel)հումանիտար և սոց.գիտությունների ֆակուլտետներում, ինչպես նաև տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներումըստ անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունների և պահանջների:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ձեռք կբերի ունակություն ուսումնասիրել ֆրանսերենլեզվով մասնագիտական արքյուրներ,
2. կկարողանա ընկալել և վերարտադրել իր մասնագիտական ոլորտին առնչվող գրականությունը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1.Մասնագիտական հիմնական տերմինները ուսումնասիրելու և կիրառելու ունակության զարգացում: Թեմա 2.Մասնագիտական տեքստի հիմնական բովանդակության ընկալում և վերարտադրում: Թեմա 3.Մասնագիտական գրավոր խոսքի հիմնական դրույթների ուսուցում:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

### **1608/Բ15. Ֆրանսերեն– 3**

*Շաբաթական 4 ժամ գործնական պարապմունք*

*3-րդ կիսամյակ, քննություն*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է խորացվաց ուսուցանել նեղ մասնագիտական ֆրանսերեն(Français professionnel)յուրաքանչյուր ֆակուլտետի առարկայական բովանդակության տիրույթում:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի գիտական երկխոսության համար պահանջվող հիմնական մասնագիտական բառապաշարին և տերմիններին,
2. կկարողանա ազատ զրույց վարել և քննարկել մասնագիտական ոլորտին առնչվող թեմաների շուրջ:

#### **Բովանդակությունը.**

- Թեմա 1. Մասնագիտական բանավոր խոսքի զարգացում: Թեմա 2.Մասնագիտական քննարկում կատարելու հմտությունների ուսուցում:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է **3** հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անձանոթ տեքստը մասնագիտական թեմայով; երկրորդ առաջադրանքն է՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը;երրորդ առաջադրանքն է՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

### **1106/Բ02. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 24 ժամ դասախոսություն*

*1-ին կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի առաջին մասի դասավանդումը նպատակ ունի ծանոթացնել ուսանողին հայոց պատմության հին շրջանի և միջնադարի պատմությանը, Հայկական լեռնաշխարհի աշխարհագրությանը և սեր առաջացնել մեր ժողովրդի բազմադարյան պատմության և նրա

հերոսական անցյալի նկատմամբ՝ շեշտը դնելով հայոց պետականության պատմության ըստ ամենայնի լուսաբանման վրա:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայոց հին ու միջնադարյան պատմությանը,
2. կկարողանա քննադատական վերաբերմունք հանդես բերել հայոց պատմության հին ու միջին շրջանի կարևորագույն իրադարձություններին,
3. յուրացրած կլինի հայոց պետականությունների պատմությունը:

**Բովանդակությունը.**

**Ներածություն.** Հայոց պատմության առարկան: Հայաստանի աշխարհագրական դիրքը, տարածքը և բնական պայմանները: Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Ուրատու, Երվանդունիների թագավորությունը: Արտաշեսյանների թագավորությունը: Արշակունիների թագավորությունը Հայաստանում 2-3-րդ դ: Թեմա 3. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 4. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 5. Հայաստանը ուշ միջնադարում:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**1106/Բ06. Հայոց պատմության հիմնահարցեր -2 (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 24 ժամ դասախոսություն*

*2-րդ կիսամյակ, Առ. Ընթ.քնն./հանրագումարային քննություն/*

**Նպատակը.**

Դասընթացի երկրորդ մասի դասավանդումը նպատակ ունի ուսանողին մատուցել հայոց պատմության նոր և նորագույն շրջանը: Դասավանդման ընթացքում շեշտը դրվում է ազգային-ազատագրական շարժումների և Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմության վերլուծության վրա:

**Կրթական արդյունքները.**



Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հայ ժողովրդի նոր և նորագույն պատմությանը,
2. կկարողանա վերլուծել հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն իրադարձությունները, Հայաստանի 1-ին, 2-րդ և 3-րդ հանրապետությունների պատմությանը և դասեր քաղել անցյալի սխալներից,
3. կկարողանա գիտելիքները լայնորեն օգտագործել իր աշխատանքային, հատկապես կրթական գործընթացներում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հայկական հարցը. առաջացումը, բովանդակությունը: Ազատագրական պայքարը 17-18-րդ դդ.: Ռուսաստանի տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում: Թեմա 2. Հայ ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը (1870-ական թթ.-20-րդ սկիզբ): Ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 3. Պանթուրքիզմը պետական քաղաքականություն Թուրքիայում: Արևմտահայության Մեծ եղեռնը: Հայաստանը 1917թ. փետրվարյան հեղափոխության շրջանում: Հոկտեմբերյան հեղափոխությունը և Հայաստանը: Թեմա 4. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 5. Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ.: Թեմա 6. Հայաստանի երրորդ հանրապետությունը: Թեմա 7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ 7, 7, 6 միավոր արժեքով:

### **1302/Բ10. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ 46 ժամ դասախոսություն,*

*4-րդ կիսամյակ, Առ. Ընթ.քնն./հանրագումարային քննություն/*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների

արդի միտումների և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին մասնագիտական պատկերացումների ձևավորմանը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները,
2. կհասկանա ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը,
3. կկարողանա վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնաժին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Փիլիսոփայությունը հոգևոր մշակույթի համակարգում: Փիլիսոփայության առարկան և գործառույթները: Թեմա 2. Քաղաքակրթության զարգացման պատմափիլիսոփայական ակնարկ: Թեմա 3. Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Մարդկային կեցության առանձնահատկությունները: Թեմա 4. Հոգեկանի ծագման հիմնահարցը: Թեմա 5. Աշխարհի ճանաչողության հիմնահարցը: Թեմա 6. Մարդու փիլիսոփայական ըմբռնումը: Փիլիսոփայական մարդաբանություն: Թեմա 7. Հասարակության փիլիսոփայական ըմբռնումը: Պատմության իմաստը: Թեմա 8. Սոցիալական կյանքի հիմնական ոլորտները: Թեմա 9. Հասարակության հոգևոր կյանքը: Հոգևոր մշակույթ և քաղաքակրթություն: Թեմա 10. Հասարակական առաջադիմությունը և մարդկության ապագան:

### **Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 5 միավոր:

## **Կամընտրական դասընթացներ**

### **1001/Բ16. Տնտեսագիտություն (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 30ժ. դասախոսություն,  
4-րդ կիսամյակ, սպուգարք*

#### **Նպատակը.**

Ուսանողներին տալ անհրաշեշտ գիտելիքներ մարդկանց բարեկեցության բնույթի և պատճառների, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունների, հիմնախնդիրների, դրանց հնարավոր լուծումների, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության մասին, ինչը կնպաստի նաև ռացիոնալ տնտեսական վարքագծի ձևավորմանը:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. յուրացրած կլինի տնտեսագիտության հիմունքները,
2. պատկերացում կունենա տնտեսության շուկայական համակարգի կենսագործունեության, հիմնական հասկացությունների, զարգացման օրինաչափությունների և ձեռնարկարություն ծավալելու պայմանների մասին:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները. Տնտեսագիտության առարկան: Թեմա 2. Տնտեսության շուկայական համակարգը. եկամտի և արդյունքի շրջապտույտը: Թեմա 3. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Թեմա 4. Սպառողի վարքի տեսություն: Թեմա 5. Արտադրության ծախսերը: Թեմա 6. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: Թեմա 7. Ձեռնարկությունների և կազմակերպությունների տիպերը և տեսակները: Թեմա 8. Ազգային հաշիվների համակարգը: Թեմա 9. Մակրոտնտեսական կայունությունը և տատանումները: Թեմա 10. Փողը և բանկային համակարգը. դրամավարկային քաղաքականությունը: Թեմա 11. Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: Թեմա 12. Միջազգային տնտեսական գործակցությունը:

## **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Կիսամյակի ընթացքում անցկացվում է երկու լսարանային ստուգողական աշխատանք, որոնցից դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում 4 հարց պարունակող հարցատոմսերով:

### **1202/Բ16. Քաղաքագիտություն (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 30ժ.դասախոսություն*

*4-րդ կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կստանա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին,
2. պատկերացում կկազմի քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին,
3. կունենա քաղաքագիտական վերլուծություններ կատարելու բավարար ունակություններ,
4. կկարողանա կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: Թեմա 2. Քաղաքականության ծագումը և էությունը: Թեմա 3. Քաղաքական

իշխանության էությունն ու կառուցվածքը: Թեմա 4. Հասարակության քաղաքական համակարգը: Թեմա 5. Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Թեմա 6. Քաղաքական կուսակցությունները և կուսակցական համակարգեր: Թեմա 7. Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 8. Քաղաքական գաղափարախոսություններ: Թեմա 9. Քաղաքական էլիտա և լիդերություն:

### **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

### **1901/Բ16. Իրավագիտություն (2կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 30ժ. դասախոսություն*

*4-րդ կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Սովորեցնել

հասարակականկյանքիտարբերություններիօրենսդրական կարգավորմանհիմունքները:Նպատակներից է նաև ստացած իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների մշակումը, ինչպես նաև իրավական աշխարհայացքի ու մշակույթի ձեւավորումը:

#### **Կրթականարդյունքները.**

Դասընթացիհաջողավարտինուսանողը.

1. Կիմանա պետության և իրավունքի մասին հիմնական սկզբունքները, հայեցակարգերը,
2. կիմանա օրենսդրության առանձին ճյուղերի իրավական կարգավորման հիմունքները,
3. կյուրացնի կարևոր իրավական հասկացությունները, եզրույթները,
4. ձեռք կբերի գիտելիքները գործնականում կիրառելու ունակություններ և հմտություններ:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հասարակություն և պետություն: Թեմա 2. Իրավունք: Թեմա 3. Իրավական կարգավորման կառուցակարգը և իրավունքի կենսագործումը: Թեմա 4. Իրավունքի ձևերը: Թեմա 5. Իրավունքի համակարգը: Թեմա 6. Օրինականություն, իրավաչափ վարքագիծ, իրավախախտում: Թեմա 7. Կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնահարցերը: Թեմա 8-9. Սահմանադրական իրավունք: Թեմա 10. Դատական իշխանություն և դատական համակարգ: Թեմա 11-16. Քաղաքացիական իրավունք: Թեմա 17. Աշխատանքային իրավունք: Թեմա 18. Ընտանեկան իրավունք: Թեմա 19. Էկոլոգիական իրավունք: Թեմա 20. Քրեական իրավունք: Թեմա 21-23. Դատավարական իրավունք: Թեմա 24. Միջազգային իրավունք:

### **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց (նախապես տրամարդված հարցաշարից), որոնցից առնվազն 2-ին դրական պատասխանող ուսանողը ստանում է «ստուգված»:

### **1107/Ք14. Մշակութաբանություն (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 30ժ. դասախոսություն*

*3-րդ կիսամյակ, ստուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ՝ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. համապարփակ գիտելիքներ կունենա գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին,
2. ծանոթ կլինի մշակույթի կառուցվածքին, բաղադրիչներին, տիպաբանությանը, մշակույթի ծագման և զարգացման

- հիմնական օրինաչափություններին,
3. ընդհանուր գիտելիքներ կունենա համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1.Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Թեմա 2. Մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, գործառույթները և մեխանիզմները: Մշակութային գործընթացներ: Թեմա 3.Մշակույթը «անհատ», «բնություն», «հասարակություն», «էթնոս», «քաղաքակրթություն» կատեգորիաների համատեքստում: Թեմա 4.Համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումները մոտեցումներ հարցադրումներ, օրինաչափություններ: Թեմա 5.Ժամանակակից մշակութային գործընթացները և գլոբալիզացիայի խնդիրը:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

### **2101/Բ14. Կրոնների պատմություն (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 30ժ. դասախոսություն  
3-րդ կիսամյակ, ստուգարք*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա՝ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնաձիսական

առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնաձիսական համակարգը,

2. կհասկանա ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները,
3. կկարողանա կատարել տարբեր կրոնների ու կրոնական ուղղությունների տարբերակում և քննական արժևորում:

### **Բովանդակությունը.**

- Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա 2. Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Թեմա 3. Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա 4. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Թեմա 5. Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Թեմա 6. Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա 7. Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Թեմա 8. Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Թեմա 9. Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Թեմա 10. Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

### **Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

## **3. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ**

### **3.1. Պարտադիր դասընթացներ**

#### **2301/Բ01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 6 ժամ դասախոսություն*

*1-ին կիսամյակ, սրուգարք*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների, դրանց տեխնիկական, ծրագրային և



ինֆորմացիոն ապահովման մասին, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհասկանա համակարգչի կառուցվածքի և աշխատանքի հիմնական սկզբունքները,
2. կիմանա, թե ինչ է օպերացիոն համակարգը, բազմախնդրայնությունը, որոնք են տեքստային և գրաֆիկական խմբագիրների աշխատանքների սկզբունքների տարբերությունը, Windows օպերացիոն համակարգի և Word, Excel, PowerPoint ծրագրերի հետ աշխատելու հիմնական սկզբունքները,
3. կկարողանա ինքնուրույն կատարել իր թղթավարությունը (կուրսային, ավարտական աշխատանքներ, հաշվարկների կատարում, զեկուցումների համար սլայդների պատրաստում և այլն):

### **Բովանդակությունը.**

Թեմա1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: Օպերացիոն համակարգի հասկացություն և բազմախնդրայնության գաղափար: Windows օպերացիոն համակարգի գրաֆիկական ինտերֆեյսի հետ աշխատելու հիմնական սկզբունքները: Թեմա 2. Microsoft Word փաստաթղթի ստեղծում և ձևավորում: Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ: Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ուսանողին տրվում են հանձնարարություններ, որոնք հիմնված են դասընթացի ընթացքում անցած թեմաների վրա:

**0002/Բ03. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ 30ժ. դասախոսություն 5-րդ կիսամյակ, ստուգարք*

*5-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացների նպատակն է ուսանողներին ծանոթացնել ԱԻ-ում (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհներ, արտադրական և տրանսպորտային վթարներ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահանում և այլն) և պատերազմական պայմաններում պաշտպանվելու ձևերին և մեթոդներին, նաև փրկարարական աշխատանքների ծավալներին, բովանդակությանը և կատարմանը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է կարողանա ստեղծված ԱԻ-ում և պատերազմական պայմաններում ժամանակին և ճիշտ իրականացնի պաշտպանվելու ձևերն ու մեթոդները:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. ԱԻ-ի նախարարության կառուցվածքը և խնդիրները: Թեմա 2. ԱԻ-ները, նրանց բնութագրերը և կանխարգելման միջոցառումները: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկությունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության կազմակերպումը ԱԻ-ների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգումը ընթանում է բանավոր՝ հարցատոմսերով:

**0708/Բ02. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ, 30 ժամ դասախոսություն*

*1-ին կիսամյակ ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ձևավորել էկոլոգիական աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց էկոլոգիագիտության պատմությանը, բնական համակարգերի կազմավորման, գործունեության հիմունքներին, բնություն–հասարակություն համակարգում էկոլոգիայի հիմնախնդիրներին:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. Կիմանա էկոլոգիայի որպես գիտության ձևավորման մասին, կենդանիների և բույսերի էկոլոգիայի մասին, էկոհամակարգի, կենսացենոզի և նոոսֆերայի ուսմունքների մասին, մարդկության կայուն զարգացման սկզբունքներին մասին:
2. Կհասկանա բնական և անթրոպոգեն էկոհամակարգերի զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները:
3. Կկարողանա վերլուծություններ կատարել էկոլոգիական վիճակի մասին և կատարել համապատասխան եզրակացություններ, կատարել ջրի, հողի և օդի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական անալիզներ:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. էկոլոգիա և նրա կայացման պատմությունը: Թեմա 2. Օրգանիզմի և միջավայրի միջև փոխազդեցությունները: Թեմա 3. Պոպուլյացիաների էկոլոգիա: Թեմա 4. Համակեցություններ: Թեմա 5. Նյութերի երկրաբանական և կենսաբանական շրջապտույտը: Թեմա 6. Կենսոլորտ: Թեմա 7. Կենսոլորտի էվոլյուցիայի հիմնական ուղղությունները: Թեմա 8. Կենսոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցությունները: Թեմա 9. Անթրոպոգեն ազդեցությունները մթնոլորտի և կլիմայի վրա: Թեմա 10. Անթրոպոգեն ազդեցությունները ջրոլորտի վրա: Թեմա 11. Անթրոպոգեն ազդեցությունները լիթոսֆերայի վրա: Թեմա 12. Անթրոպոգեն ազդեցությունները համակեցությունների վրա: Թեմա 13. Կենսոլորտի վրա ազդեցության հատուկ ձևեր: Թեմա 14. Բնության պահպանության և ուսցիոնալ բնօգտագործման հիմնական սկզբունքները: Թեմա 15. էկոլոգիա և մարդու առողջությունը: Թեմա 16. էկոլոգիա և տնտեսագիտություն: Թեմա 17. Միջազգային համագործակցությունը էկոլոգիայի շրջանակներում: Թեմա 18.

Բնության պահպանություն և գլոբալիզացիա: Թեմա 19. Բնության պահպանություն և նանոտեխնոլոգիաներ:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

**3.2 Կամընտրական դասընթացներ**

**0102/Բ04. Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 30ժ. դասախոսություն, 1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի, ձևավորել վերացական մտածողություն:

**Կրթականարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կձանոթանա մաթեմատիկայի պատմությանը,
2. կհասկանա մաթեմատիկական մտածողության իմաստը,
3. կկարողանա լուծել պարզագույն կիրառական խնդիրներ:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: Թեմա 2. Աքսիոմային մոտեցումը մաթեմատիկային: Թեմա 3. Բազմությունների տեսության տարրերը: Թեմա 4. Կոորդինատների մեթոդ: Թեմա 5. Մաթեմատիկական մոդելավորում: Թեմա 6. Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության տարրերը:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ստուգարքն անց է կացվում բանավոր հարցազրույցի ձևով:

**0404/Բ04. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 30ժ. դասախոսություն, 1-ին կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ձևավորել բնագիտական

աշխարհայացք՝ ծանոթացնելով նրանց բնագիտության զարգացման պատմությանը, բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափություններին, բնագիտության զարգացման ներկա միտումներին:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանաբնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության հիմնական սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:
2. կհասկանաբնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքներըևօրինաչափությունները:
3. կկարողանա կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Բնագիտության առարկան: Օրինաչափությունները և զարգացման հիմնական փուլերը: Թեմա 2. Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Թեմա 3. Աշխարհի մեխանիստական պատկերը: Թեմա 4. Դասական թերմոդինամիկայի և վիճակագրական ֆիզիկայի կոնցեպցիաները: Թեմա 4. Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Թեմա 5. Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Թեմա 6. Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Թեմա 7. Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Թեմա 8. Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Թեմա 9. Աստղերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Թեմա 10. Մոլորակների կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Թեմա 11. Տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Թեմա 12. Քվանտային կոսմոլոգիա: Անթրոպային սկզբունք: Թեմա 13. Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Թեմա 14. Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման**

## **չափանիշները.**

Ստուգարքին տրվում է առավելագույնը 4 հարց, նախապես տրված հարցաշարից:

### **4.Ընդհանուր մասնագիտական դասընթացներ**

#### **1. 2801/Բ03. Տարիքային մանկավարժություն(4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ (60 ժամ դասախոսություն)*

*1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր տարիքի երեխաների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա երեխայի անձի ձևավորման դինամիկան և դիալեկտիկան՝ հենվելով ուսումնասիրված տարիքային հոգեբանության գիտելիքների վրա.

2. կհասկանա տարիքային մանկավարժության տեղն ու դերը մարդու մանկավարժության գիտության համատեքստում.

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

#### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Տարիքային մանկավարժության որպես ընդհանուր մանկավարժության բաղադրամաս: Թեմա 2. Տարիքային մանկավարժության էությունը, նպատակը, խնդիրները: Թեմա 3. Մինչնախադպրոցական և նախադպրոցական տարիք, նրանց առանձնահատկությունները: Թեմա 4. Կրտսեր դպրոցական տարիք, նրա առանձնահատկությունները: Թեմա 5. Միջին դպրոցական տարիքի առանձնահատկությունները: Թեմա 6. Ավագ դպրոցական տարիքի առանձնահատկությունները: Թեմա 7. Անչափահասների դաստիարակության խնդիրները և դրանց իրականացումը շուկայական

հարաբերությունների արդի փուլում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/Բ01. Մանկավարժության տեսություն-1(4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ (48Ա. դասախոսություն),

1-ին կիսամյակ, *եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության ընդհանուր հիմունքները, մանկավարժական գիտությունների համակարգը, գիտամանկավարժական հետազոտության մեթոդները, համառոտակի մանկավարժական մտքի պատմությունը, ուսուցման տեսությունը և անձի ձևավորման հիմնահարցերը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա մանկավարժական գործընթացի օրինաչափությունները և առանձնահատկությունները, մանկավարժության կապը այլ գիտությունների հետ, մանկավարժության ճյուղերը, ուսուցման կարևորությունը մանկավարժական գիտությունների ենթատեքստում, մանկավարժական մտքի պատմությանը վերաբերող մի շարք հիմնահարցեր, անձի ձևավորման հիմնախնդիրները,

2. կհասկանա մանկավարժության տեսությանը վերաբերող հիմնահարցերը, մանկավարժական գիտության հասկացությունների համակարգը,

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել մանկավարժության մյուս դասընթացներում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Մանկավարժության ընդհանուր հիմունքները: Թեմա 2. Մանկավարժական գիտությունների համակարգը: Թեմա 3. Մանկավարժական մտքի պատմական զարգացումը: Թեմա 4. Կրթության բովանդակությունը, կրթական նոր հարացույցերը: Թեմա 5. Անձի ձևավորում և սոցիալականացում:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/ Բ.20. Համագործակցության մանկավարժություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ (48 ժամ դասախոսություն),*

*5-րդ կիսամյակ, առանց ընթ. գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել համագործակցության մանկավարժությունը որպես մանկավարժության ճյուղերից մեկը, նրա ուսումնասիրության առարկան, խնդիրները, կապն այլ ճյուղերի հետ: Մեկնաբանել համագործակցության մանկավարժության կարևորությունը նոր հարացույցերի հիմքի վրա՝ հաշվի առնելով սուբյեկտ-սուբյեկտ հարաբերակցությունը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա համագործակցության մանկավարժության դերը մարդու /երեխայի/ դաստիարակության գործում՝ սոցիալականացման համատեքստում:
2. կհասկանա, համագործակցության մանկավարժության հիմնարար գաղափարները, սկզբունքներն ու մեթոդները:



3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կյանքում՝ ընտանիքում, դպրոցում և հասարակության տարբեր սոցիալական կառույցներում: Իմացած գիտելիքները կկարողանա կիրառել սոցիալական մանկավարժի գործունեության տարբեր իրավիճակներում և ուսումնասիրություններում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Համագործակցության մանկավարժության տեղը մանկավարժական մտքի պատմության մեջ: Թեմա 2. Համագործակցության մանկավարժության գաղափարները, սկզբունքներն ու մեթոդները: Թեմա 3. Համագործակցային ուսուցումը՝ նոր ժամանակի պահանջ: Թեմա 4. Համագործակցության մանկավարժության դերը դպրոցի կառավարման համակարգում: Թեմա 5. Դպրոց-ընտանիք- համայնք համագործակցությունը:

### ***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **2804 / Բ07 Մանկավարժության տեսություն-2 (5 կրեդիտ)**

Շաբաթական 6 ժամ (60Ա. դասախոսություն),

2-րդ կիսամյակ, *եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության ընդհանուր հիմունքները, մանկավարժական գիտությունների համակարգը, գիտամանկավարժական հետազոտության մեթոդները, համառոտակի մանկավարժական մտքի պատմությունը, ուսուցման տեսությունը և անձի ձևավորման հիմնահարցերը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա մանկավարժական գործընթացի օրինաչափությունները և առանձնահատկությունները, մանկավարժության կապը այլ գիտությունների հետ, մանկավարժության ճյուղերը, ուսուցման





մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել իրենց ապագա մասնագիտական իրացման մեջ հոգեբանական գիտելիքի կիրառմանը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա հոգեբանության ընդհանուր դրույթները, հոգեկան գործընթացների և վիճակների առանձնահատկությունները և ձևավորման հիմնական օրինաչափությունները,

2. կկարողանա կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ, ինչպես նաև հասարակական կյանքում:

**Բովանդակությունը.**

Թեմա 1՝ Հոգեբանության առարկան, խնդիրները, ոլորտները: Հասկացություն հոգեկանի մասին: Հոգեկանի կառուցվածքը և ֆունկցիաները: Թեմա 2՝ Պերցեպտիվ պրոցեսների հոգեբանություն: Թեմա 3՝ Կոգնիտիվ պրոցեսների հոգեբանություն: Թեմա 4՝ Անձ, անհատ, անհատականություն հասկացությունները հոգեբանության մեջ: Խառնվածք, բնավորություն, ընդունակություններ: Թեմա 5՝ Սոցիալական խմբեր: Առաջնորդություն: Շփում, հաղորդակցում: Թեմա 6՝ Մանկավարժական և տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները: Տարիքային պարբերացում և ճգնաժամեր: Կրթության և դաստիարակության հոգեբանական առանձնահատկությունները:

**Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ 05. Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա (4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ, 46 դասախոսություն,

2-րդ կիսամյակ, *առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և հիգիենայի հիմունքներին և դրանց տարիքային առանձնահատկություններին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի և հիփենայի հիմունքները,

2. կհասկանա վերոնշյալի տարիքային առանձնահատկությունները,

3. կկարողանա օգտագործել ձեռքբերած գիտելիքները մանկավարժական գործունեության ընթացքում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հենաշարժական ապարատ. կառուցվածքը և հիմնական ֆունկցիաները: Թեմա 2. Շարժական ակտիվությունը որպես նորմալ ֆիզիկական զարգացման հիմք: Թեմա 3. Նեյրոէնդոկրին համակարգ: Թեմա 4. Մարսողական համակարգ: Թեմա 5. Շնչառական համակարգ: Թեմա 6. Սիրտանոթային համակարգ: Թեմա 7. Արյունաստեղծ օրգաններ: Թեմա 8. Երեխաների նորմալ ֆիզիկական, ինտելեկտուալ, սոցիալական, էմոցիոնալ և սեռական զարգացում:

### **Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/Բ 08. ՀՀ կրթության համակարգը, (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ (46ժ. դասախոսություն),*

*3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ՀՀ կրթական համակարգը, նրա կառուցվածքը, իրականացվող բարեփոխումները, նրա փուլերն ու ուղղությունները:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա ՀՀ կրթության համակարգը ամբողջության մեջ, նրանում իրականացվող բարեփոխումները,

2. կհասկանա ՀՀ կրթության համակարգի առանձնահատկությունները,

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Կրթության դերն ու նշանակությունը անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման ու դաստիարակության գործում: Թեմա 2. ՀՀ կրթության համակարգը, նրա առանձնահատկությունը: Թեմա 3. <<Կրթության մասին>> օրենքը՝ որպես կրթության համակարգի իրավական հիմք: Թեմա 4. Հանրակրթության պետական չափորոշիչները որպես ուսումնադաստիարակչական գործընթացի հիմք: Թեմա 5. ՀՀ կրթության համակարգի կառուցվածքը: Թեմա 6. Միջնակարգ մասնագիտական կրթական հաստատություններ: Թեմա 7. Բարձրագույն դպրոց: Թեմա 8. Ոչ պետական հանրակրթական դպրոցներ՝ քոլեջ, ճեմարան, վարժարան: Թեմա 9. Բոլոնյան հոչակագիր: Թեմա 10. ՀՀ կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպականին: Թեմա 11. Բարձրագույն դպրոցում գործող մանկավարժության ամբիոնների դերն ու նշանակությունը: Թեմա 12. ՀՀ կրթության նախարարությանը կից գործող Կրթության Ազգային ինստիտուտի դերն ու նշանակությունը: Թեմա 13. Կրթության զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները  
Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ09. Գեղագիտականը և հարակալան գիտակցությունը (2 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 46 ժամ դասախոսություն*

*3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց*

***Նպատակը.***

Դասընթացի նպատակն է գեղագիտական ըմբռնումների ու հասարակական գիտակցության կապը:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա գեղագիտական հիմնական կատեգորիաները.
2. կհասկանա գեղագիտության դերն ու ազդեցությունը աշխարհայացքի ձևավորման վրա.
3. կկարողանաներկայացնել թեմային վերաբերվող նյութեր և վերլուծություններ:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Գեղագիտությունը՝ որպես աշխարհաճանաչողության միջոց:  
Թեմա 2. Գեղագիտական հիմնական կատեգորիաները՝ վեհը, գեղեցիկը և այլն: Թեմա 3. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը Թեմա 4. Գեղագիտականի և հասարակական գիտակցության կապը:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/Բ13. Մանկավարժական արժեքաբանություն / 5 կրեդիտ/**

*Շաբաթական 4 ժամ, 46 ժ*

*3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել •իտելիքներ մանկավարժական արժեքաբանության տեսական-մեթոդաբանական հիմունքների մասին, մանկավարժական արժեքաբանության ձևավորման և զարգացման փուլերի վերաբերյալ, նաև ծանոթացնել մանկավարժական արժեքաբանության էությանը և բովանդակությանը: Կրթական իրավիճակի զարգացման կարևոր ուղիներից մեկը արժեքային հարացուցիչն անցնելն է, որը բացահայտում է կրթության բացառիկ արժեքի վերաբերյալ պատկերացումը:

### **Կրթական արդյունքները.**

*Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.*

1. կիմանա գիտելիքներ մանկավարժական արժեքաբանությունից,
2. կհասկանա մանկավարժական արժեքների կարգադասությունները,

3. մանկավարժական արժեքների հիման վրա կձևավորվի մանկավարժական կուլտուրա, Բովանդակությունը.

Թեմա 1. Մանկավարժական արժեքանության տեսական հիմունքները:  
Թեմա 2. Մանկավարժական արժեքանության կայացման և զարգացման գործոնները: Թեմա 3. Մանկավարժական արժեքանության էությունը և բովանդակությունը: մանկավարժական արժեքանության հասկացության մասին:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները  
Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**0707/ Բ10. Գենետիկա (4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ (60 ժամ դասախոսություն ),

3-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել՝ մարդու գենետիկայի առարկայի, զարգացման հիմնական փուլերի, հայ ժողովրդի մարդաբանության և գենետիկայի, վարքագծի և մտավոր կարողությունների գենետիկայի մասին մասնագիտական պատկերացում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա մարդու ժառանգականության հիմնահարցերը, ժառանգական հատկանիշների և հիվանդությունների ձևերը և նրանց ուսումնասիրման հիմնական մեթոդները,
2. կիմանա մարդու պոպուլյացիոն գենետիկայի և վարքագծի գենետիկայի հիմնադրույթները:

**Բովանդակությունը.**



Թեմա 1. Մարդու գենետիկայի պատմություն: Թեմա 2 .Հայ ժողովրդի մարդաբանություն և գենետիկա Թեմա 3. Վարքագծի գենետիկա: Թեմա 4. մտավոր կարողությունների գենետիկա:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ21. Բժշկագիտություն հիմունքներ (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ, 46 դասախոսություն,*

*5 կիսամյակ, առանց ընթ, գն.*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին բժշկագիտության հիմունքներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1.կիմանա բժշկագիտության հիմունքները,

2.կհասկանա բժշկության սոցիալական ասպեկտները, տարբեր հիվանդությունների կանխարգելման ռազմավարությունը,

3.կկարողանա անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին բուժօնություն:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Մարդու կենսաբանական և սոցիալական էությունը: Թեմա

2. Ընդհանուր տեղեկություն մարդու օրգանիզմի կառուցվածքի և գործունեության մասին: Թեմա 3. Բժշկության սոցիալական ասպեկտները: Թեմա 4. Սոցիալական գործոնների ազդեցությունը մարդու առողջության վրա: Թեմա 5. Հիվանդությունների կանխարգելման հիմնական ռազմավարությունները: Թեմա 6. Ներքին հիվանդություններ: Վնասվածքներ: Թեմա 7. Առաջին բուժօգնություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/Բ19. Հոգեբանամանկավարժական ախտորոշում(5 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ, 46ժ. դասախոսություն,

4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հոգեբանամանկավարժական ախտորոշման կարևորությունը դիդակտիկական համակարգում: Դասընթացի շրջանակներում քննարկվում են հոգեբանամանկավարժական ախտորոշման տեսակները, մեթոդները, ախտորոշման չափանիշները մանկավարժական գործընթացում:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա հոգաբանամանկավարժական ախտորոշման հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից տեսությունները, ավանդական նորովի մոտեցմամբ ուսուցման գործընթացները, սուբյեկտ-սուբյեկտ համագործակցությունը ուսուցման գործընթացում, բարոյահոգեբանական մթնոլորտը, միջանձնային հարաբերությունների կարևորությունը,

2. կհասկանա հոգեբանամանկավարժական ախտորոշման էությունը, տեսակները, չափանիշները, վերլուծության առանձնահատկությունները,

3. կկարողանա իրականացնել հոգեբանամանկավարժական նախնական, ընթացիկ, վերջնական ախտորոշում, կփորձեն կազմել ախտորոշման քարտեր և թեստեր:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հեգաբանամանկավարժական ախտորոշումը մանկավարժական գիտությունների համակարգում: Թեմա 2. Հոգեբանամանկավարժական ախտորոշման տեսակները: Թեմա 3. Հեգաբանամանկավարժական ախտորոշման մեթոդները: Թեմա 4. Ուսումնադաստիարակչական գործընթացի ախտորոշում: Թեմա 5. Հոգեբանամանկավարժական ախտորոշման չափանիշները:

***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները  
Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ34. Մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում (6 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ, 60 ժամ դասախոսություն,  
7-րդ կիսամյակ, առ.ընթ.գնահատման*

***Նպատակը.***

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ մանկության սոցիալական պաշտպանության առումով, որոնք անհրաժեշտ են սոցիալական մանկավարժի գործունեության տեսանկյունից: Քանի որ ուսանողն արդեն ունի անձի հոգեւոցիալական զարգացման, սոցիալական քաղաքականության, սոցիալական հիմնախնդիրների և պահանջմունքների, կրթության կազմակերպման առանձնահատկությունների մասին գիտելիքներ, ունի պատկերացումներ խոցելի խմբերի կարիքների մասին, հետևաբար, կարևոր է դառնում երեխաների մանկության պաշտպանության խնդիրը, ինչպես նաև մանկության սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման մասին գիտելիքների ձեռքբերումը:

***Կրթական արդյունքները.***

***Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.***

- կունենա համակողմանի պատկերացումներ մանկության սոցիալական պաշտպանության բովանդակության և էության մասին
- կիմանա երեխաների իրավունքների, նրանց սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հիմնական օրենսդրական և նորմատիվ ակտերի, երեխաների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպչական կառուցվածքի մասին,

• կիմանա ընտանիքի և մանկության պաշտպանության սոցիալական ծառայությունների մասին, կոֆտարկի միգրացիան և թափառաշրջիկությունը որպես սոցիալական հիմնախնդիր:

### **Բովանդակություն**

Թեմա 1. Ժամանակակից հայ հասարակության մեջ մանկությունը որպես սոցիալ-իրավական երևույթ: Թեմա 2. Մանկության սոցիալական պաշտպանության բովանդակությունն ու էությունը: Թեմա 3. Երեխաների իրավունքները և սոցիալ-իրավական ոլորտում գործող հիմնական օրենսդրական և նորմատիվային ակտերը: Թեմա 4. Երեխաների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպչական կառուցվածքը: Թեմա 5. Ընտանիքի և մայրության պաշտպանության սոցիալական ծառայություններ: Թեմա 6. Միգրացիան և թափառաշրջիկությունը որպես սոցիալական հիմնախնդիրներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/ Բ16. Շտկողական մանկավարժություն, 6 կրեդիտ**

*Շաբաթական 6 ժամ, 60 ժամ դասախոսություն,*

*4-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել շտկողական մանկավարժության ոլորտում տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ու հմտությունների ծավալը:

### **Կրթական արդյունքները.**

#### **Դասընթացի հաջող ավարտին ուսանողը**

1. Կիմանա շտկողական մանկավարժության զարգացման պատմությունը և տեսամեթոդական հիմքերը:

2. Կհասկանա շտկողական մանկավարժության բովանդակությունը և մեթոդները, կձանոթանա ներառական ուսուցմանը և դաստիարակությանը:

3. Կհմանա ֆիզիկական դաստիարակության դերը և նշանակությունը սահմանափակ կարողություններով երեխաների զարգացման գործում:

Կկարողանա տեսական գիտելիքները կիրառել կյանքում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Հատուկ կրթության համակարգի պատմություն: Թեմա 2. Շտկողական մանկավարժության տեսամեթոդական հիմքերը: Թեմա 3. Շտկողամանկավարժական աշխատանքի հիմքերը: Թեմա 4. Երեխաների ներառական ուսուցումը և դաստիարակությունը: Թեմա 5. Շտկողական մանկավարժության բովանդակությունը և մեթոդները:

### ***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

### ***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **1308/Բ17. Տարիքային հոգեբանություն(4 կրեդիտ)**

*Շաբաթական 2 ժամ 46 ժամ դասախոսություն*

*4-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ձևավորել հիմնարար գիտելիքներ մարդու հոգեկան զարգացման եւ կայացման տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ, տարիքային ճգնաժամերի ընթացքում հոգեբանական օգնության արդյունավետ ձևերի կազմակերպմանը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կհմանա անձի զարգացման տարիքային

առանձնահատկությունները.

2. կհասկանա տարիքային զարգացմանն առնչվող հիմնախնդիրները.
3. կկարողանա լուծել պրոբլեմային իրադրությունները՝ կիրառելով տարիքային հոգեբանական վերլուծություն:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1.Տարիքային հոգեբանության առարկան և խնդիրները:  
Թեմա 2.Տարիքային հոգեբանության տեսական հիմնահարցերը: Թեմա 3. Անձնավորության անհատական զարգացումը: Թեմա 4. Տարիքային հոգեբանության մեթոդները: Թեմա 5. Նորածնության տարիք: Թեմա 6. Վաղ մանկություն: Թեմա 7.Հոգեկանի զարգացումը նախադպրոցական տարիքում (3-ից 7 տ.): Թեմա 8. Կրտսեր դպրոցական տարիք (6-7-ից մինչև 9-10 տ.): Թեմա 9. Դեռահասության տարիք (11-12 մինչև 14-15 տ.): Թեմա 10.Պատանեկության հոգեբանություն (15-16-ից մինչև 21-25 տ.):

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/ Բ27. Արվեստի մանկավարժություն, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4ժամ, 46 ժամ դասախոսություն,*

*6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակը սովորողներին արվեստի մանկավարժության վերաբերյալ գիտելիքների հաղորդումը, ինչպես նաև՝ մասնագիտական գործունեության ընթացքում արվեստի մանկավարժության ընձեռած հնարավորությունների գործնական կիրառումներին ծանոթացնելն ու կարողություններ, հմտություններ ձևավորելն է:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Արվեստի մանկավարժության նպատակը, խնդիրները:  
Թեմա 2. Արվեստի մանկավարժության կապն այլ գիտությունների հետ:Թեմա 3.Արվեստի մանկավարժության սկզբունքները, մեթոդները,

գործառույթները: Թեմա 4.Սոցիալական մանկավարժության և արվեստաբուժության սկզբունքների, մեթոդների, գործառույթների համատեղ կիրառումը մանկավարժական գործընթացում: Թեմա 5. Անձի մտածողության ձևավորման վրա արվեստի մանկավարժության զարգացնող ազդեցությունը: Թեմա 6.Ստեղծագործականության հնարավորությունների բացահայտման հիմախնդիրը արվեստի մանկավարժության մեջ: Թեմա 7.Մանկավարժական և գեղարվեստական հաղորդակցում: Թեմա 8. Արվեստի մանկավարժության շտկողական, բուժական նշանակությունն ու ազդեցությունը հատուկ կարիքներ ունեցող երեխաների վրա: Թեմա 9. Արվեստի մանկավարժության դերը անձի ձևավորման և զարգացման համատեքստում: Թեմա 10. Արվեստաբուժությունը /արտթերապիա/ որպես հոգեշտկողական օգնություն զարգացման խնդիրներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործում: Թեմա 11. Արվեստաբուժության ճյուղերը: Նկարչական թերապիա, Իզոթերապիա, Լուսանկարչաթերապիա, Խաղային թերապիա, Ավազաթերապիա, Ընթերցողական թերապիա, Հեքիաթաթերապիա, Երաժշտաթերապիա, Պարային թերապիա, Իմագոթերապիա, Տիկնիկաթերապիա, Կինեզիոթերապիա: Թեմա 12. Արվեստի մանկավարժության մեթոդիկաներով աշխատող ուսուցչի դերը, նրա աշխատանքների կազմակերպումը դպրոցում: Մանկավարժական վարպետությունը որպես արվեստ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**  
Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

#### **1401/Բ22. Խոսքի մշակույթի հիմունքներ (4 կրեդիտ)**

*Շարաթական 4ժամ 46ժամ դասախոսություն*

*5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել խոսքի մշակույթի տեսական ու գործնական դրույթներին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա խոսքի հիմնական հատկանիշները.
2. կհասկանա խոսքի կիրառական առանձնահատկությունները.
3. կկարողանա գործնականում կիրառել տեսական դրույթները:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Համառոտ ակնարկ խոսքի մշակույթի, նրա դերի և առանձնահատկություններիմասին: Թեմա 2. Լեզու և խոսք: Թեմա 3. Ծանոթություն ճարտասանական արվեստի մասին: Թեմա 4. Ոճերի տարբերակումը: Թեմա 5. Խոսքի տեսակները: Թեմա 6. Խոսքի արժանիքներ: Թեմա 7. Խոսքի թերություններ: Թեմա 8. Հրապարակային խոսք: Թեմա 9. Գեղարվեստական խոսք: Թեմա 10. Գիտական խոսք:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ23. Կրթական տեխնոլոգիաներ (4 կրեդիտ)**

*Շաբաթական 6 ժամ, 70 ժամ դասախոսություն*

*5-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել կրթության տեխնոլոգիայի հասկացությունը, ձևավորել պատկերացումներ ժամանակակից դիդակտիկայի խնդիրների վերաբերյալ, խորացնել գիտելիքները նոր կրթական և մանկավարժական տեխնոլոգիաների վերաբերյալ, ներկայացնել աշխարհում եւ Հայաստանում կրթական-տեխնոլոգիական բարեփոխումների ուղղությունը և ընթացքը, ինչպես նաև կրթության տեխնոլոգիաների զարգացման կարևորությունը կրթադաստիարակչական գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝



1. Կկարողանա ձեռք բերել գիտելիքներ կրթության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ, այդ թվում տեղեկատվական և կոմունիկատիվ տեխնոլոգիաների, կրթահամակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված դրանց դերի և տեղի, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ինտեգրացիոն գործընթացների մասին, ինչը կծառայի կրթական տեխնոլոգիաների վերաբերյալ ընդհանուր գիտելիքների արդիականացմանը:

2. Կհասկանա կրթության տեխնոլոգիաների զարգացողական դերը, որը թելադրված է կրթության հանդեպ նոր պահանջներով, նոր դիդակտիկական մոտեցումների կարևորությունը՝ կրթական գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

3. Կկարողանա ձեռք բերված տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ ընտրելով առավել արդյունավետ բանաձևերը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Կրթական տեխնոլոգիայի հասկացությունը: Թեմա 2. Ուսուցման ավանդական տեխնոլոգիաներ: Թեմա 3. Ուսուցման նորագույն տեխնոլոգիաներ: Թեմա 4. Դաստիարակության տեխնոլոգիաներ: Թեմա 5. Կրթության կառավարման տեխնոլոգիաներ: Թեմա 6. Ուսուցման արդյունավետության գնահատման տեխնոլոգիաներ:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/28. Դաստիարակությունը քրեակատարողական հիմնարկներում 4 կրեդիտ**

Շաբաթական 2 ժամ, 45 ժամ դասախոսություն,  
6-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել քրեակատարողական հիմնարկներում անչափահաս օրինախախտների

վերադաստիարակման, հասարակության մեջ իր տեղն ու դերը գտնելու, ուսման և աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունք ձևավորելու գերձընթացներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա օրինախախտ երեխաների վերադաստիարակման կարևորությունը,

2. կհասկանա օրինախախտ երեխաներին հասարակությունից մեկուսացնելու, նրանց վերադաստիարակության գործում տարբեր գործելաոճերի, մեթոդների նշանակությունը:

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Դասընթացի նպատակը, խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Թեմա 2. Հատուկ վերադաստիարակչական հաստատություններ: Թեմա 3. Օրինախախտ երեխաների իրավունքներն ու պարտականությունները: Թեմա 4. Աշխատանքային դաստիարակությունը հատուկ դաստիարակչական հաստատություններում: Թեմա 5. Դաստիարակչական աշխատանքը մանկական վերադաստիարակչական հաստատություններում: Թեմա 6. Հանրակրթական ուսուցումը քրեակատարողական հիմնարկներում: Թեմա 7. Պրոֆեսիոնալ տեխնիկական ուսուցումը քրեակատարողական հիմնարկներում: Թեմա 8. Դաստիարակությունը և նրա դերը քրեակատարողական հիմնարկներում: Թեմա 9. Դաստիարակության բաղադրիչների իրականացումը քրեակատարողական հիմնարկներում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/ Բ29. Մանկավարժական վալեոլագիա, 4 կրեդիտ**

Շաբաթական 4 ժամ, 46 ժամ դասախոսություն, 6-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ձևավորել տեսական գիտելիքներ ու

գործնական կարողություններ, որոնք կօգնեն մանկավարժներին՝ ուսումնական հաստատություններում ստեղծելու վալեոլոգիական միջավայր, որպեսզի պահպանեն երեխաների առողջությունը, քանի որ հասարակության զարգացման կարևորագույն պահանջներից է մարդու առողջության պահպանումը և հետագա զարգացումը: Ժամանակակից կրթության համակարգը պետք է համապատասխանի հասարակության պահանջներին և ընդունի առողջությունը որպես մանկավարժական արժեք:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա կրթական գործընթացի վալեոլոգիական վերլուծության մեթոդները, հատուկ մանկավարժական տեխնոլոգիաները.

2. կիմանա առողջ ապրելակերպի հիմունքները.

3. կկարողանա աշակերտների մոտ վալեոլոգիական դաստիարակության իրականացնել, աշխատել ծնողների հետ՝ երեխաների առողջության ձևավորման և պահպանման հարցերով:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Մանկավարժական վալեոլոգիան որպես գիտություն: Թեմա 2. Մանկավարժական վալեոլոգիայի ուսումնասիրության առարկան, նպատակը, խնդիրները: Թեմա 3. Մանկավարժական վալեոլոգիայի հիմնական հասկացությունները: Թեմա 4. Մանկավարժական վալեոլոգիայի տեսական - մեթոդաբանական հիմքերը: Թեմա 5. <<Առողջությունը>> և <<Առողջ ապրելակերպը>> որպես մանկավարժական արժեքներ: Թեմա 6. Կրթության վալեոլոգիական հիմունքները: Թեմա 7. Կրթական միջավայրի վալեոլոգիական վերլուծությունը: Թեմա 8. Ուսուցչի վալեոլոգիական գործունեության հիմնական ուղղությունները: Թեմա 9. Դպրոցականների օրվա ռեժիմը որպես վալեոլոգիայի կարևոր միջոց: Թեմա 10. Դպրոցական հիվանդությունները և դրանց հաղթահարման ճանապարհները: Թեմա 11. Առողջությունը պահպանող մանկավարժական տեխնոլոգիաներ: Թեմա 12. Առողջ ապրելակերպը որպես անձի կայացման գործոն: Թեմա

13. Աշխատանք ծնողների հետ երեխաների առողջության պահպանման հարցերով:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**  
**Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ30. Մանկավարժական վարպետություն և էթիկա 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ 46 ժամ դասախոսություն*

*6-րդ կիսամյակ, Առ.եզ. գնահատման*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ուսուցչի մանկավարժական վարպետությանը, անձնային և մասնագիտական որակներին, մանկավարժական կուլտուրային, տակտին, հեղինակությանը, էթիկային և նրա չափանիշներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա ուսուցչի մանկավարժական վարպետության էությունը, տեխնիկան, տակտը, հեղինակությունը, էթիկան,
2. կհասկանա վարպետության և էթիկայի տարբերությունները, առանձնահատկությունները:
3. կկարողանա գործնականում կիրառել դասի ընթացքում վարպետություն, տեխնիկա և հմտությունները

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Ուսուցչի մասնագիտական գործունեությունը: Նշանավոր մանկավարժները ուսուցչի մասին: Ուսուցչի մասնագիտական զարգացման փուլերը, նրան ներկայացվող մանկավարժական պահանջները: Թեմա 2. Ուսուցչի մանկավարժական վարպետության էությունը, մասնագիտական առանձնահատկություններն ու ընդունակությունները: Ու-

սուցչի պրոֆեսիոգրաման և պսիխոգրաման, ուսուցչի տեխնիկան, տակտը և վարպետությունը: Թեմա 3. Բարոյագիտությունը որպես մանկավարժական էթիկայի հիմք: Մանկավարժական էթիկայի հասկացությունները: Բարոյականությունը որպես հասարակական գիտակցության ձև: Թեմա 4. Բարոյականության ազգային և համամարդկային արժեհամակարգերը: Ուսուցչի էթիկայի հիմնական բաղադրիչները: Մանկավարժական էթիկայի բովանդակությունը, արդի չափորոշիչները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**  
Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **1301/|Բ. Տրամաբանություն, 2 կրեդիտ**

Շաբաթական 4 ժամ, 30 ժամ դասախոսություն  
*առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց*

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հիմնական հասկացություններին, օրենքներին և սկզբունքներին, որոնք ունեն ինչպես իմացաբանական, այնպես էլ մեթոդաբանական նշանակություն: Ուսանողը ոչ միայն բացահայտում է կատարելագործում է իր տրամաբանական կարողություններն, այլև ձեռք է բերում հմտություններ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների յուրացմանը, գիտահետազոտական աշխատանքի կատարմանը և օգնում ինքնուրույն անալիտիկ մտածողությանը, ինտելեկտուալ անհատականության ձևավորմանը:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը .

1. կիմանա մտքի կառուցվածքը, այն տրամաբանական կանոններն ու օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտիք կանոնավորությունը ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,

2. կհասկանա տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,

3. կկարողանա տրամաբանական գիտելիքների և հմտությունների միջոցով բարձրացնել իմացական գործընթացների և հատկապես գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Սրամաբանության առարկան և նշանակությունը: Թեմա 2. Լեզվի տրամաբանական վերլուծությունը: Թեմա 3. Հասկացությունը որպես տրամաբանական ձև և հասկացության ընդհանուր բնութագրությունը: Թեմա 4. Դատողություն: Թեմա 5. Մտածողության ձևական տրամաբանական հիմնական օրենքները: Թեմա 6. Դեդուկտիվ մտահանգում: Մտահանգման ընդհանուր բնութագիրը: Թեմա 7. Ինդուկտիվ մտահանգումներ: Թեմա 8. Փաստարկման տրամաբանական հիմունքները: Թեմա 9. Տրամաբանական սխալներ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

### **Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/32. Մանկավարժական ռիսկաբանություն, 4 կրեդիտ**

Շաբաթական 4 ժամ, 46 ժամ դասախոսություն

6-րդ կիսամյակ, *եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը**

Ուսանողներին ներկայացնել ռիսկաբանության ուսումնասիրության առարկան, նպատակը, հիմնախնդիրները, մեկնաբանել ռիսկի էությունը, ռիսկի գործոնի ընկալման ու չափման առանձնահատկությունները, դրանց ազդեցության գործակիցները, տեղն ու դերը մանկավարժական գործընթացում ու սոցիալականացման համատեքստում:

### **Կրթական արդյունքները.**

### **Դասընթացի ավարտին ուսանողը.**

- կիմանա ռիսկաբանության ուսումնասիրության առարկան, նպատակը, հիմնախնդիրները,
- կմեկնաբանի ռիսկի էությունը,
- կկարողանա չափել ռիսկի գործոնները ու դրանց առանձնահատկությունները,
- կտիրապետի ռիսկի ազդեցության գործակիցների կիրառմանը մանկավարժական գործընթացում ու սոցիալականացման համատեքստում

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Մանկավարժական ռիսկաբանության ուսումնասիրության առարկան, նպատակը, խնդիրները, հիմնախնդիրները: Թեմա 2. Ռիսկաբանության տեսություններն ու մոդելները: Թեմա 3. Ռիսկի ու ռիսկի գործոնի հասկացությունը: Թեմա 4. Սովորողների կողմից ռիսկի ընկալման առանձնահատկությունները: Թեմա 5. Ռիսկի գործոնի չափման հնարավորություններն ու գործակիցները: Թեմա 6. Ռիսկի գործոնի գնահատումը սովորողների շրջանում: Թեմա 7. Ռիսկաբանական վերլուծությունների ներդրումը անձի զարգացման ու սոցիալականացման գործընթացներում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2202/Բ33. Սոցիալական վիճակագրություն (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ , 45 ժամ*

*6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Փոխանցել ուսանողներին գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են զանգվածային բնույթի երևույթների մասին տեղեկատվության

հավաքման, ամփոփ ներկայացման և ցուցիչների հաշվարկման, մեկնաբանման և վերլուծման համար: Դասընթացի շրջանակներում կքննարկվի նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված տեղեկատվությունը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կկարողանա գործածել սոցալիական վիճակագրության ու ժողովրդագրության առանցքային հասկացությունները,
2. կմեկնաբանի ամփոփ ներկայացված ժողովրդագրական և վիճակագրական տեղեկատվությունը, բացատրել ցուցիչների նշանակությունը և հաշվարկման ձևը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Ներածություն. վիճակագրական գործունեության կազմակերպումը ՀՀ-ում: Թեմա 2. Սոցիալական վիճակագրության օբյեկտ, առարկա, տեղը այլ գիտությունների միջև: Թեմա 3. Սոցիալական վիճակագրության մեթոդը: Թեմա 4. Վիճակագրական դիտարկում, դրա տեսակները և ձևերը: Թեմա 5. Տեղեկատվության ընդհանրացման ձևեր: Թեմա 6. Վարիացիայի և դինամիկայի շարքերի վերլուծություն: Թեմա 7. Ինդեքսներ, դրանց տիպեր և ձևեր: Թեմա 8. Ազգաբնակչության վիճակագրություն: Թեմա 9. Ժողովրդագրության օբյեկտը, առարկան, տեղը այլ գիտությունների միջև: Թեմա 10. Ազգաբնակչության թվաքանակ և կազմ: Թեմա 11. Ծնելիություն և վերարտադրողական վարք: Թեմա 12. Մահացություն և կյանքի միջին տևողություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

### **Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/Բ35. Համեմատական մանկավարժություն (4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ , 45 ժամ

7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատումով

### **Նպատակը.**



Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժության ծագումը, ծանոթացնել համաշխարհային մանկավարժական մոտեցումներին՝ օգտագործելով ժամանակակից մանկավարժական մտքի և պատմության նվաճումները:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա համեմատական մանկավարժության միջոցով արտասահմանյան երկրների մանկավարժության դերի ու նշանակության, նվաճումների և փորձի արդյունքների ու օգտագործման մասին.

2. կհասկանա համագործակցության կարևորությունն ու դերը համեմատական մանկավարժության զարգացման գործում.

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Կրթության դեմոկրատական գործընթացն աշխարհում:

Թեմա 2. Համեմատական մանկավարժության մեթոդոլոգիան: Թեմա 3.

Հայաստանի Հանրապետության և առաջատար երկրների միջև

փոխհարաբերությունները: Թեմա 4. Ֆրանսիայի կրթական

համակարգի կառուցվածքը: Թեմա 5. Գերմանիայի կրթական

համակարգը: Թեմա 6. Կրթության դերը, նպատակը, խնդիրները:

Թեմա 7. ԱՄՆ-ի կրթական համակարգը: Թեմա 8. Ճապոնիայի

կրթական համակարգը: Թեմա 9. Ռուսաստանի կրթական համակարգը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

### **Ընթացիկ ստուգումներ**

Նախատեսված 2 ընթացիկ **ստուգում**, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

2801/Բ36. **Երջանկության մանկավարժություն (4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ , 45 ժամ

7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ներկայացնել մանկավարժության նոր գիտաճյուղը որպես մանկավարժական բոլոր համակարգերը ինտեգրող միջոցի՝ հիմք ընդունելով ստեղծագործության կարևորությունը համագործակցության, ուրախության, մարդուն երջանկության տանելու սկզբունքը և դրա փիլիսոփայական, անթրոպոլոգիական, վալեոլոգիական, հոգեբանամանկավարժական կողմերը:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Երջանկության մանկավարժություն գիտաճյուղի էությունը: Թեմա 2. Երջանկության մանկավարժության գիտատեսական հիմքերը: Թեմա 3. Երջանկության մանկավարժության կապը մանկավարժության գիտաճյուղերի հետ: Թեմա 4. Երջանկության մանկավարժության մեջ անձի արժեքային կողմնորոշվածության հիմնահարցը: Թեմա 5. Երջանկության մանկավարժության վալեոլոգիական արժեքը: Թեմա 6. Երեխայի կենսագործունեության հիմնական տեսակների յուրահատկությունները եւ դերը անձնավորության զարգացման ընթացքում: Թեմա 7. Երջանկության մանկավարժությունը անձի անհատական-հոգեբանական որակների զարգացնող:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

### ***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### ***2801/Բ37. Ընդանեկան դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներ (4 կրեդիտ)***

*Շաբաթական 4 ժամ , 46 ժամ*

*7-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մեր երկրում նոր արժեհամակարգի պայմաններում ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրները, բացահայտել նրանց առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները,

հոգեբանամանկավարժական օրինաչափությունները, երեխաների վարքագծային դրսևորումների առանձնահատկությունները, ինչպես նաև նորովի բնութագրել խաթարված ընտանիքները, նրանցում միջանձնային փոխհարաբերությունները, երեխաների դաստիարակությունը:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա ընտանեկան դաստիարակության հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, <<ընտանիք>> սոցիալական կառույցի գործառույթային փոփոխությունները. ծնող պատճառները, հասկացությունները.

2. կհասկանա հայ ավանդական ընտանիքի տեղն ու դերը երեխայի անձի ձևավորման գործընթացում.

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել կյանքում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Ընտանիքը որպես հասարակության առաջնային կառույց: Թեմա 2. Ժամանակակից ընտանիքների գործառույթային փոփոխությունները: Թեմա 3. Նորովի մետեցում ընտանիքասիրության հիմնահարցին: Թեմա 4. Երեխայի դաստիարակության հիմնախնդիրներն ընտանիքում տնտեսավարման նոր համակարգի պայմաններում: Թեմա 5. Մանկական թափառաշրջիկության և մուրացկանության հիմնահարցը <<-ում: Թեմա 6. Իրավախախտումներն անչափահասների շրջանում, համալիր մոտեցում նրանց դաստիարակությունն ու վերադաստիարակությանը: Թեմա 7. Թմրամոլությունը, հարբեցողությունը, մարմնավաճառությունն ու մարդավաճառությունը անչափահասների շրջանում: Թեմա 7. Դաստիարակության հիմնահարցերը սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներում:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

## **2801/Բ38.Էթնոմանկավարժություն (4 կրեդիտ)**

Շաբաթական 4 ժամ , 46 ժամ

7-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել էթնոմանկավարժությունը որպես մանկավարժության ճյուղերից մեկը, նրա ուսումնասիրության առարկան, խնդիրները, կապն այլ ճյուղերի հետ: Մեկնաբանել էթնոմանկավարժության դերը մարդու /երեխայի/ դաստիարակության գործում՝ սոցիալականացման համատեքստում:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա էթնոմանկավարժության դերը էթնիկական ինքնագիտակցության ձևավորման հարցում, որ էթնոսի ներկայացուցիչն է սովորողը, ինչ ազգային առանձնահատկությունների կրողն է նա. ազգային մտածելակերպ, ազգային հոգեբանություն, ավանդույթներ, սովորույթներ, լեզու, կրոն, պատմություն: Այս բոլորի կրողն է էթնոսը և այն սերնդեսերունդ փոխանցվում է ու դաստիարակվում:

2. կհասկանա, ազգային արժեքները, որոնց իմացությամբ էթնոսի ներկայացուցիչ մոտ ձևավորվում է ազգային ինքնագիտակցության ոգի:

3. կկարողանա ստացած գիտելիքները կիրառել կյանքում՝ ընտանիքում, դպրոցում և հասարակության տարբեր սոցիալական կառույցներում: Իմացած գիտելիքները կկարողանա կիրառել սոցիալական մանկավարժի գործունեության տարբեր իրավիճակներում և ուսումնասիրություններում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Էթնոմանկավարժությունը մանկավարժական գիտությունների կառուցվածքում. նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները: Թեմա 2. Էթնոմանկավարժության կապն այլ գիտությունների հետ: Թեմա 3. Էթնիկական ինքնագիտակցություն. ձևավորման ուղիներն ու միջոցները: Թեմա4. Անձը և մշակույթը. Ազգային արժեքների ճանաչումը որպես անձի ազգային մտածելակերպի և հոգեբանության ձևավորման կարևոր գործոն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ39.Մանկավարժական կանխատեսում (4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ , 36 ժամ*

*7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ քննության*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել մանկավարժական կանխատեսման կարևորությունը դիդակտիկական համակարգում: Դասընթացի շրջանակներում քննարկվում են մանկավարժական կանխատեսման նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները, մանկավարժական կախատեսման տեսակները, մանկավարժական կանխատեսման մեթոդները, մանկավարժական կանխատեսման չափանիշները մանկավարժական գործընթացում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա մանկավարժական կանխատեսման ժամանակակից հիմնախնդիրները, կանխատեսման առանձնահատկությունները ավանդական և նորովի մոտեցման դեպքում, սուբյեկտ-սուբյեկտային համագործակցությունը կանխատեսման ընթացքում, բարոյահոգեբանական մթնոլորտը, միջանձնային հարաբերությունների կարևորությունը:

2. կհասկանա մանկավարժական կանխատեսման էությունը, տեսակները ու փուլերը, չափանիշները, վերլուծության առանձնահատկությունները:

3. կկարողանա իրականացնել մանկավարժական կանխատեսման նախնական, ընթացիկ, վերջնական կանխատեսում, կփորձի կազմել կանխատեսման հարցեր և թեստեր:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Մանկավարժական կանխատեսման դասընթացի նպատակը, ժամանակակից խնդիրները, հիմնական հասկացությունները: Թեմա 2. Մանկավարժական կանխատեսումը գիտությունների

համակարգում: Թեմա 3. Մանկավարժական կանխատեսման տեսակները: Թեմա4. Մանկավարժական կանխատեսման մեթոդները: Թեմա5. Ուսումնադաստիարակչական գործընթացի կանխատեսման առանձնահատկությունները: Թեմա 6. Դասախոսի և ուսանողի անձնային և մասնագիտական որակների ախտորոշում և դրանց հիման վրա կանխատեսում:

**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ ստուգումներ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ24.. Դպրոցի կառավարման հիմունքներ(4 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ , 46 ժամ*

*5-րդ կիսամյակ, , առանց եզրափակիչ քննության*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հանրակրթական դպրոցի գործունեության գործառույթները, չափանիշները, խնդիրները և վեր հանել ու համակողմանիորեն վերլուծել բարեփոխումների համալիր ծրագրում դպրոցի կառավարման հիմնախնդիրները:

**Կրթականարդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա <<դպրոց>> սոցիալական կառույցի կառավարման համակարգն իր ենթահամակարգերով և կառավարող սուբյեկտներով՝ նրանց իրավասություններով ու պարտականություններով.

2. կհասկանա դպրոցի կառավարում և ղեկավարում հասկացությունների հարաբերակցությունը, դպրոցի արդյունավետ կառավարման դերը սովորողների կրթության որակի և համակողմանի դաստիարակության ապահովման գործում.

3. կկարողանա դասընթացում ներառված դպրոցի կառավարման վերաբերյալ համապատասխան գիտելիքները կիրառել կրթօջախում իրականացրած սոցիալական մանկավարժի գործունեության

ընթացքում:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Դպրոցի նպատակը, խնդիրները և գործունեության չափանիշները: Թեմա 2. Դպրոցի տնօրենը որպես լիդեր: Թեմա 3. Դպրոցի տնօրենի պարտականությունները: Թեմա 4. Դպրոցի տնօրենը որպես ուսուցչապետ: Թեմա 5. Կառավարման աշխատանքի ոճերը: Թեմա 6. Կառավարման սկզբունքները: Թեմա 7. Կառավարման գործառույթները: Թեմա 8. Կառավարման մեթոդները: Թեմա 9. Արտադասարանական աշխատանքի կազմակերպումը և վերահսկողությունը: Թեմա 10. Արտադպրոցական աշխատանքների կառավարում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

**Ընթացիկ ստուգումներ**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ31. Սոցիալական և կրթական հաղորդակցում (5 կրեդիտ)**

*Շաբաթական 4 ժամ , 46 ժամ*

*7-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին սոցիալական և կրթական հաղորդակցման վերաբերյալ գիտելիքի հաղորդումը, ինչպես նաև ապագա սոցիոլական մանկավարժի հաղորդակցական գործիմացության զարգացումը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական և կրթական հաղորդակցման հիմնական հասկացությունները.
2. կհասկանա հաղորդակցման առանձնահատկությունների դիագնոստիկան.
3. կկարողանա կիրառել գործունեության ընթացքում սոցիալ-կրթական հաղորդակցման գիտելիքները և հմտությունները:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. «Հաղորդակցում» հասկացությունը և տեսակները:  
Թեմա 2. Սոցիալական հաղորդակցման ուղղությունները: Թեմա 3. Հասարակության զարգացումը և սոցիալական հաղորդակցման կրթական մոդելը: Թեմա 4. Հաղորդակցման գործունեություն: Թեմա 5. Սոցիալ-կրթական հաղորդակցման կառուցվածքը, ոճերը և գործառույթները: Թեմա 6. Մանկավարժական ներգործություններ և հետադարձ կապ սոցիալ-կրթական հաղորդակցման գործընթացում: Թեմա 7. Անձի, խմբի և հասարակության հաղորդակցման պահանջմունքները: Թեմա 8. Արդի կրթական ուժերի հաղորդակցման աղբյուրները: Թեմա 9. Սոցիալ-կրթական հաղորդակցման արդյունավետությունը արդի պահանջներին համապատասխան կրթական ոլորտում: Թեմա 10. Հաղորդակցման տեխնոլոգիաների տեղն ու դերը սոցիալ-կրթական հաղորդակցման արդյունավետության գործում: Թեմա 11. Սոցիալական մանկավարժի հաղորդակցման առանձնահատկությունները:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/Բ06. Սոցիալական մանկավարժության հիմունքներ 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ, 46 ժամ դասախոսություն*

*2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության առարկան, հիմնախնդիրը և մեկնաբանել սոցիալական միջավայրի մեծ դաստիարակչական ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց զարգացման գործընթացի վրա սոցիալականացման համատեքստում:



### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անձի ձևավորման հիմքում ընկած գործառույթները, սոցիալականացման փուլերը, մարդու գործունեության տեսակները, պահանջմունքները, «ընտանիք» սոցիալական կառույցի գործառույթները, «դպրոց» սոցիալական ինստիտուտի դերն անձի ձևավորման գործում և անձ-հասարակություն-պետություն հարաբերակցությունը.

2. կհասկանա միջավայրի (միկրո, մեզո, մակրո) մեծ դերակատարությունը մարդու սոցիալականացման գործընթացում, մարդ-բնություն, մարդ-հասարակություն փոխներգործությունը.

3. կկարողանադասընթացի ընթացքում ձեռք բերած համակողմանի գիտելիքները՝ մարդու անձի ձևավորման, սոցիալականացման, հասարակության մեջ ունեցած դերի վերաբերյալ կիրառել սոցիալական մանկավարժի պրակտիկ գործունեության ժամանակ:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1.Սոցիալական մանկավարժության ծագումը, ուսումնասիրության առարկան, խնդիրները, նպատակները, հիմնական հասկացությունները: Թեմա 2. Անձնավորության ձևավորումը: Թեմա 3. Անձնավարության ձևավորումը, զարգացումը և դաստիարակությունն ընտանիքում: Թեմա 4.Սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներ: Թեմա 5.Կրթօջախի դերն անձի ձևավորման, զարգացման և դաստիարակության գործում: Թեմա 6. Հասարակություն և պետություն:

### ***Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները***

#### ***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ **քննություններ**, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

#### ***Եզրափակիչ քննություն***

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ02. Սոցիալական քաղաքականություն, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ, 46 ժամ դասախոսություն*

*1-ին կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել սոցիալական քաղաքականության էությունը, օգտագործվող մոդելները՝ գտնելով սոցիալական հիմնախնդիրների լուծումները: Քանի որ ուսանողն արդեն ունի գիտելիքներ կրթության, սոցիալ-մանկավարժական գործընթացի կարևորության մասին, ընկալում է այդ գործընթացները որպես մարդու մտավոր և սոցիալական կայացման գործընթացներ, ուստի կարևոր է սոցիալական քաղաքականության ազդեցության տակ գտնվող հիմնական հասարակական զարգացման ցուցանիշների կարգավորումը և մարդկանց պահանջմունքների բավարարման պայմանների ապահովումն իրականացնող սոցիալական քաղաքականության էության մասին պատկերացում ունենալը, սոցիալական ծառայությունների լայնցանցի մշակման և իրականացման առումով:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական քաղաքականության էությունը.
2. կհասկանա սոցիալական հիմնախնդիրների և սոցիալական պահանջմունքների փոխառնչությունները, լուծումները.
3. կկարողանա վերլուծել սոցիալական ծառայությունները, դրանց առանձնահատկությունները, սոցիալական քաղաքականության իրականացման սուբյեկտների գործունեությունը և դիտարկի սոցիալական քաղաքականության նպատակների և գնահատման խնդիրը:

### **Բովանդակություն**

Թեմա 1. Սոցիալական քաղաքականության էությունը: Թեմա 2. Սոցիալական քաղաքականության իրականացումը: Թեմա 3. «Բարեկեցության պետությունը» որպես ժամանակակից սոցիալական քաղաքականության հիմք: Թեմա 4. Սոցիալական քաղաքականության գնահատումը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ12. Սոցիալական մանկավարժություն, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ, 60 ժամ դասախոսություն*

*3-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության առարկան, հիմնախնդիրը և մեկնաբանել սոցիալական միջավայրի մեծ դաստիարակչական ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց զարգացման գործընթացի վրա սոցիալականացման համատեքստում:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիմանա անձի ձևավորման հիմքում ընկած գործառույթները, սոցիալականացման փուլերը, մարդու գործունեության տեսակները, պահանջմունքները, «ընտանիք» սոցիալական կառույցի գործառույթները, «դպրոց» սոցիալական ինստիտուտի դերն անձի ձևավորման գործում և անձ-հասարակություն-պետություն հարաբերակցությունը.

2. կհասկանա միջավայրի (միկրո, մեզո, մակրո) մեծ դերակատարությունը մարդու սոցիալականացման գործընթացում, մարդ-բնություն, մարդ-հասարակություն փոխներգործությունը.

3. կկարողանադասընթացի ընթացքում ձեռք բերած համակողմանի գիտելիքները՝ մարդու անձի ձևավորման, սոցիալականացման, հասարակության մեջ ունեցած դերի վերաբերյալ կիրառել սոցիալական մանկավարժի պրակտիկ գործունեության ժամանակ:

**Բովանդակությունը.**

Թեմա 1. Սոցիալական մանկավարժության ծագումը,

ուսումնասիրության առարկան, խնդիրները, նպատակները, հիմնական հասկացությունները: Թեմա 2. Անձնավորության ձևավորումը: Թեմա 3. Անձնավարության ձևավորումը, զարգացումը և դաստիարակությունը ընտանիքում: Թեմա 4. Սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներ: Թեմա 5. Կրթօջախի դերն անձի ձևավորման, զարգացման և դաստիարակության գործում: Թեմա 6. Հասարակություն և պետություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**2801/Բ26. Սոցիալական մանկավարժի աշխատանքի մեթոդիկա և տեխնոլոգիա, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ ,60 ժամ դասախոսություն*

*6-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց*

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է՝ ձեռքբերել գիտելիքներ տեխնոլոգիայի էության, դրանց դասակարգման և համակարգման մասին, հստակեցնել սոցիալական մանկավարժի գործունեության ուղղությունները, մշակել նոր տեխնոլոգիաներ, որոնք կօգնեն ուսանողին տարբեր տեսանկյուններից դիտարկել խնդիրները, դրանց լուծումները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների էությունն ու բովանդակությունը.

2. կհասկանա սոցիալական մանկավարժի պրակտիկ աշխատանքի տեխնոլոգիաների և մեթոդների փոխկապակցվածությունը. կհստակեցնի սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների ընտրության և գործածության առանձնահատկությունները սոցիալական մանկավարժի գործունեության տեսանկյունից.

3. կկարողանա դիտարկել այն արդիական ու տիպական

իրավիճակները, որոնք սոցիալ-մանկավարժական միջամտության անհրաժեշտություն են առաջադրում:

### **Բովանդակությունը.**

*Թեմա 1.* Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների մշակման տեսական հիմքերը: *Թեմա 2.* Կրթական հաստատություններում սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիա: *Թեմա 3.* Ընտանիքի հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի տեխնոլոգիա: *Թեմա 4.* Տարբեր հաստատություններում աշխատանքի սոցիալ մանկավարժական տեխնոլոգիաներ:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները** **Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններ, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/Բ18. Սոցիալական մանկավարժության պատմություն, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ, 46 ժամ դասախոսություն*

*4-րդ կիսամյակ, հանրագումարային քննություն*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության գաղափարի գենեզիսը, պատմությունը տարբեր երկրներում: Բացահայտել տարբեր երկրների առաջավոր փորձը, վերլուծել Հայաստանի Հանրապետությունում այս ասպարեզում առկա ձեռքբերումներն ու հեռանկարները:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական մանկավարժության պատմությունը, ժամանակակից մոտեցումները, տարբեր երկրների առաջավոր փորձը, մեր երկրում առկա ձեռքբերումները.

2. կհասկանա սոցիալական մանկավարժության պատմության կարևորությունն որպես մանկավարժական մտքի բաղկացուցիչ մաս.

3. կկարողանա տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Սոցիալական մանկավարժության գաղափարի գենեզիսը:  
Թեմա 2. Սոցիալական մանկավարժությունը Եվրոպայում: Թեմա 3. Սոցիալական աշխատանքը Ռուսաստանում: Թեմա 4. Սոցիալական մանկավարժության ծագումը Հայաստանում:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

*Եզրափակիչ քննություն*

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

### **2801/Բ40. Սոցիալական հոգեբանություն, 4 կրեդիտ**

*Շաբաթական 4 ժամ , 60 ժամ դասախոսություն*

*7-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատումով դասընթաց*

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել գիտելիքներ խմբերի տեսակների, խմբային փոխհարաբերությունների, շփման ու հաղորդակցման առանձնահատկությունների մասին, ինչպես նաև քննարկել այնպիսի հարցեր, ինչպիսիք են սոցիալական ռեպրեզենտացիաները, ստերեոտիպները, հասարակական կարծիքը, կաուզալ ատրիբուցիաները և այլն:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի ավարտին ուսանողը.

1. կիմանա սոցիալական հոգեբանության հիմնական խնդրացանկը.
2. կհասկանա խմբային դինամիկայի օրինաչափությունները.
3. կկարողանա բացահայտել սոցիալ-հոգեբանական երևույթները:

### **Բովանդակությունը.**

Թեմա 1. Սոցիալական հոգեբանության առարկան, խնդիրները, սոցիալական հոգեբանության մեթոդոլոգիան և մեթոդները: Թեմա 2. Հասարակական գիտակցությունը և հասարակական հոգեբանությունը: Թեմա 3. Մարդկանց փոխազդեցության էությունը, տեսակները և հիմնական առանձնահատկությունները: Թեմա 4. Շփման հասկացությունը, էությունը և կողմերը: Թեմա 5. Փոքր խումբը

հասկացությունը և նրա հոգեբանությունը: Թեմա 6. Փոքր խմբի գործառնական հարաբերությունների ենթակառուցվածքը: Թեմա 7. Դասակարգերի սոցիալական հոգեբանության հասկացությունը և առանձնահատկությունները: Թեմա 8. Ամբոխի հոգեբանությունը, տեսակները և հիմնական բնութագիրը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

***Ընթացիկ քննություններ***

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներ, յուրաքանչյուրը՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**Կրթական այլ մոդուլներ**

«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտություն

**Մասնագիտական (մանկավարժական) պրակտիկա (6 կրեդիտ)**

*4 շաբաթ, 8-րդ կիսամյակ, ստուգարք*

**Նպատակը.**

Արտադրական պրակտիկայի նպատակն է կոնկրետ հիմնարկության օրինակով ամրապնդել և խորացնել հիմնարար մանկավարժական առարկաների գծով գործնական հմտությունները:

**Կրթական արդյունքները.**

Պրակտիկայի հաջող ավարտին ուսանողը.

1. ծանոթ կլինի հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական մեթոդներին և սկզբունքներին,
2. կիմանա հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները, դրանց գործնական կիրառությունը կրթադաստիարակչական գործընթացում,
3. կունենա անհրաժեշտ գիտելիքներ հանրակրթական դպրոցում

սոցիալական մանկավարժ աշխատելու համար:  
**Ստուգումների անցկացման ձևը և գնահատման  
չափանիշները.**

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժի աշխատանք կատարելու տեսական և մեթոդական անհրաժեշտ գիտելիքների գործնական ստուգում և համապատասխան փաստաթղթերի (մանկավարժական պրակտիկայի օրագիր և այլն) լրացման ստուգում:

**Կուրսային աշխատանք -1 (2 կրեդիտ)**

*6-րդ կիսամյակ, հանրագումարային*

**Կուրսային աշխատանք -2 (2 կրեդիտ)**

*7-րդ կիսամյակ, հանրագումարային*

**Ավարտական աշխատանք (20 կրեդիտ)**

*8-րդ կիսամյակ, հանրագումարային*



**III ԲԱԺԻՆ**  
**ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Մաս I.**  
**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ ծրագրով.

**1.«Կրթության կազմակերպում»**

**1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը**

Մագիստրոսի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են նախանշված ուսումնական կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական կառուցամասերի կրեդիտներով արտահայտված ծավալների հետևյալ համամասնությամբ.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց- մոդուլների քանակը
<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Լրացական դասընթացներ	0	1
Ընդհանուր կրթամաս	15	2
Մասնագիտական պարտադիր կրթամաս	24	16
Կամընտրական դասընթացներ	33	6
<b>ՀԵՏԱՀՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>		
Գիտական սեմինար	12	4
Գիտահետազոտական աշխատանք	18	3
Գիտահետազոտական պրակտիկա	3	1
Գիտամանկավարժ. պրակտիկա	3	1

Մագիստրոսական թեզի պաշտպանություն	12	1
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120</b>	<b>32</b>

Կիսամյակ	I	II	III	IV	Ընդամենը
Ուսումնական կառուցամաս, կրեդիտ	27	24	21	0	72
Հետազոտական կառուցամաս, կրեդիտ	3	6	9	30	48
<b>Ընդամենը, կրեդիտ</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>30</b>	<b>120</b>

Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողությունը, որից 16-ը հատկացվում է տեսական ուսուցմանը և պրակտիկաներին, իսկ 4-ը՝ քննաշրջանին: Ծրագրի առաջին երեք կիսամյակների սկզբում մեկ շաբաթ հատկացվում է մագիստրանտի անհատական ուսումնական ծրագրի ձևավորմանը:

Ուսանողի շաբաթական լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է 1,5 կրեդիտ (24 կրեդիտ / 16 շաբաթ = 1,5) կամ 45 ժամ, իսկ ուսումնական կրեդիտի ժամային համարժեքը՝ 1 կրեդիտ = 30 ժամ: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

## 2. Ծրագրի բովանդակությունը

### 2.1. Ուսումնական կառուցամաս

Ծրագրի ուսումնական կառուցամասը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ **լրացական դասընթացներ, ընդհանուր կրթամաս, մասնագիտական պարտադիր կրթամաս և կամընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը ծառայում են մագիստրոսի կրթական աստիճանի

ընդհանուր հենքի ապահովմանը կամ համալրմանը, երրորդ կրթամասը կազմում է մագիստրոսի ծրագրի բովանդակային էությունը, որն ապահովում է մասնագիտական գիտելիքների և կարողությունների անհրաժեշտ հենքը, իսկ չորրորդը՝ ծրագրի անհատականացված ուսուցման մասն է:

### **Լրացական դասընթացներ**

Լրացական դասընթացների բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով մագիստրոսների՝ մասնագիտական և հետազոտական աշխատուժի միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց՝ ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, գիտական ղեկավարի երաշխավորությամբ ուսանողի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Բաղադրիչը յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև 3 լրացական դասընթացի առկայություն: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն:

<b>Մոդուլ-դասընթաց</b>	<b>Կրեդիտ</b>	<b>Լսարանային ժամ (դ/գ/լ)<sup>3</sup></b>	<b>Կիսամյակ</b>	<b>Գնահատման ձևը</b>
<i>Անգլերեն</i>	<i>0</i>	<i>64</i>	<i>1</i>	<i>Ստուգադր</i>

### **Ընդհանուր դասընթացների կրթամաս**

Ընդհանուր կրթամասի աշխատաձևավալը 6 կրեդիտ է: Ընդհանուր դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է ուսանողների մոտ փոխանցելի գիտելիքների և կարողությունների, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիական ունակությունների և մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը ապահովելուն: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *Տեղեկագր-*

<sup>3</sup>Այսուհետ՝ *դ* – դասախոսություն, *գ* – գործնական կամ սեմինար պարապմունք,

*լ* – լաբորատոր աշխատանք:

վական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում և Մասնագիտության արդիական խնդիրները: Առանձին դեպքերում, մասնագիտական անհրաժեշտությունից ելնելով, մասնագիտական պարտադիր կրթամասին հատկացված ժամաքանակի հաշվին հնարավոր է նաև ընդհանուր այլ դասընթացների ընդգրկումը:

<b>Մոդուլ-դասընթաց</b>	<b>Կրեդիտ</b>	<b>Լսարանային ժամ (դ/գ/լ)</b>	<b>Կիսամյակ</b>	<b>Գնահատման ձևը</b>
<i>Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում</i>	3	0/30/60	1	Ստուգարք
<i>Հետազոտության պլանավորում և մեթոդներ</i>	3	15/15/60	1	Ստուգարք
<i>Մասնագիտության արդիական հիմնախնդիրները</i>	3	30/0/60	1	Ստուգարք
<i>ՀՀ կրթության օրենսդրություն</i>	3	30/0/60	1	Հնրգ.
<i>Կառավարման տեսություններ</i>	3	30/0/60	1	Հնգր.
<i>Կրթության կառավարման հիմունքներ</i>	6	30/30/120	1	Եզ.Գն.

### **Մասնագիտական պարտադիր կրթամաս**

Մասնագիտական պարտադիր կրթամասն ընդգրկում է 8-ից մինչև 16՝ երեք կամ վեց կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ: Կրթամասի ընդհանուր աշխատաժամալը ծրագրում սահմանված է 48 կրեդիտ: Սա մագիստրոսական ծրագրի պարտադիր դասընթացների կազմն է, որն ապահովում է տվյալ մասնագիտացմամբ մագիստրոսի

կրթական մակարդակում պահանջվող գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Դրանք մշակվում են՝ հաշվի առնելով մասնագիտական աշխատաշուկայի արդի կարիքները և պահանջմունքները:

3. Մագիստրոսական ծրագիր՝  
**ՖԿրթության կազմակերպում՝**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/վ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
2801/M01	Բարձրագույն կրթության պլանավորում	3	30/0/60	II	Հնրգ.
2801/M02	Հանրակրթության պլանավորում	3	30/0/60	II	Հնրգ.
2801/M03	Կրթության որակի ապահովում և վերահսկողություն	6	30/30/120	II	Եզ. գն.
2801/M04	Ուսումնական գործընթացի կազմակերպումը բուհում	6	30/30/120	II	Եզ. գն.
2801/M05	Ուսումնադասարարական գործընթացի կազմակերպումը հանրակրթական դպրոցում	6	30/30/120	II	Եզ. գն.

**Կամընտրական դասընթացներ**

Կամընտրական դասընթացներն ընտրվում են ԵՊՀ այլ մագիստրոսական ծրագրերի դասընթացներից և նպատակ ունեն մագիստրանտի մոտ ձևավորելու ավարտական ատենախոսությունը հաջողությամբ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և

կարողություններ: Այս դասընթացների ընդհանուր աշխատածավալը ծրագրում սահմանափակված է 18 կրեդիտով, իսկ կազմն ընտրվում է ուսումնական խորհրդատուի (գիտական ղեկավարի) հետ համատեղ՝ տվյալ կամ հարակից (մասնագիտության շրջանակներում միջդիսցիպլինար կապերի ձևավորման նպատակով) մագիստրոսական ծրագր(եր)ի դասընթացների ցանկից՝ 2÷4-րդ կիսամյակների ընթացքում: Տվյալ ծրագրի կամընտրական դասընթացներից ընտրվող դասընթացների ընդհանուր աշխատածավալը պետք է կազմի առնվազն 9 կրեդիտ, իսկ առաջարկվող դասընթացների քանակը՝ պահանջվածից առնվազն 2 անգամ ավելի:

Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը

3. Մագիստրոսական ծրագիր՝

**«Կրթության կազմակերպում»**

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
2801/M06	Կառավարման հոգեբանություն	3 3	30/0/60	III	Հնրգ.
2801/M07	Կրթական քաղաքականություն և ռազմավարություն		30/0/60	III	Հնրգ.
2801/M08	Կրթության փիլիսոփայություն	3 3	30/0/60	III	Հնրգ.
1005/M09	Կրթության ֆինանսավորում		30/0/60	III	Հնրգ.
2801/M10	Մարդկային ռեսուրսների կառավարում	3 3	30/0/60	III	Հնրգ.

2801/M11	Ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքներ		30/0/60	III	Հնրգ.
2801/M12	Կրթական հետազոտությունների գնահատում	6	30/30/120	III	Եգ. գն.
2801/M13	Նախագծերի կառավարում	6	30/30/120	III	Եգ. գն.
2801/M14	Դասական և ժամանակակից թեստավորման տեսություններ	6 3	30/30/120	III	Եգ. գն.

## 2.2. Հետազոտական կառուցամաս

Ծրագրի հետազոտական կառուցամասը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ **գիտական սեմինար, գիտահետազոտական աշխատանք, գիտահետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա և մագիստրոսական արենախոսություն:**

**Գիտական սեմինարը** ծրագիրն իրականացնող կառույցի (ֆակուլտետ, ամբիոն, կենտրոն և այլն) կողմից կազմակերպվող կանոնավոր գործող սեմինարների շարք է, որի կայացման ժամանակացույցը սահմանվում է մագիստրոսական ծրագրի տվյալ կիսամյակի դասացուցակով: Գիտական սեմինարի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում են գիտական սեմինարներին հաղորդումներ և զեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու հմտություններ:

**Գիտահետազոտական աշխատանքի** բովանդակությունը պայմանավորվում է ուսանողի մագիստրոսական ատենախոսության թեմայի խնդիրներով և կազմվում է գիտական ղեկավարի հետ համատեղ: Այն



կազմակերպվում է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4 կիսամյակներում՝ ընդհանուր 18 կրեդիտ աշխատաժամալով:

**Գիտահետազոտական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամալ:

**Գիտամանկավարժական պրակտիկան** կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսում է բակալավրիատում սեմինարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամալ:

**Մագիստրոսական ատենախոսության** կատարումը և նրա պաշտպանությունը մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Ատենախոսության կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատաժամալ:

## Մաս II.

### ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

## 1. Տեղեկագրի նպատակը

*Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է **Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում** իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

## 1. Լրացական դասընթացներ

### 1602/Մ01. Անգլերեն

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

#### Նպատակը.

Դասընթացին պատակն է ուսուցանել ակադեմիական անգլերեն (Academic English), հումանիտար, սոց. գիտությունների, ինչպես նաև տեխնիկական ֆակուլտետներում:

#### Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջողավար տիրուսանողը.

1. կտիրապետի գրավոր և բանավոր խոսքին՝ գիտական աշխարհի հետ ազատ շփվելու համար:

2. կկարողանա մասնագիտական երկխոսության մեջ մտնել օտարերկրացի գործընկերների հետ:

3. կկարողանա պատշաճ մակարդակով մասնագիտական զեկուցում պատրաստել և մասնակցել միջազգային գիտաժողովներին:

#### Բովանդակությունը.

*Թեմա 1.* Գիտական գրավոր խոսքի զարգացում, համառոտագրության ուսուցում (Abstract writing): *Թեմա 2.* Միջազգային գիտաժողովների համար զեկուցում պատրաստելու հիմնական դրույթները: *Թեմա 3.* Գիտական բանավեճին մասնակցելու տեխնիկայի ուսուցում (Scientific discussion):

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

## 2. Ընդհանուր պարտադիր դասընթացներ

**0309/Մ00. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական**

**ոլորտում (3 կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, ստուգարք

## **Նպատակը.**

Դասընթացի հիմնական նպատակն է ուսանողներին հաղորդել մասնագիտական գիտելիքներ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում և ծանոթացնել ուսանողներին նոր ծրագրերին իրենց մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներում:

## **Կրթականարդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պիտի կարողանա.վարժ աշխատել տեքստային փաստաթղթերի հետ, փոփոխել տպիչի և համակարգչի այլ ակսեսուարների պարամետրները,վարժ կատարել տարբեր գործողություններ էլեկտրոնային աղյուսակների հետ, կազմել դիագրամներ և գրաֆիկներ, կատարել հաշվարկներ, օգտագործելով բանաձևերը,նախագծել և ստեղծել տվյալների բազան, ինչպես նաև կազմակերպել տարբեր հարցումներ, ստեղծել հաշվետվություններ,ստեղծել պարզագույն web-կայքերը, օգտագործելով HTML լեզուն:

## **Դասընթացի բովանդակությունը.**

*Թեմա 1.* Windows օպերացիոն համակարգը, համակարգչի ակսեսուարներ, նրանց պարամետրները: *Թեմա 2.* Microsoft Excel ծրագրի խորացված ուսուցում, ֆիլտրներ, գրաֆիկներ, ֆունկցիաներ: *Թեմա 3.* Microsoft Access ծրագրի ուսուցում, տվյալների բազայի ստեղծում, աղյուսակների փոփոխում, կապերի ստեղծում, մեկ և մեկից ավելի աղյուսակներում օգտագործվող հարցումներ, ձևերի և հաշվետվությունների ստեղծում: *Թեմա 4.* HTML փաստաթղթի ստեղծումը, կառուցվածքը, հիմնական դրոյթները և տեգերը:

## **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներն անցկացվում են համակարգչի վրա, յուրաքանչյուրը՝ 5 միավոր առավելագույն արժեքով:

2801/Մ01	1. Մասնագիտության հիմնախնդիրները	արդի	2. 3 կրեդիտ
3. 2 ժամ/շաբաթ		4. 30 ժամ դասախոսություն	
5. առաջին կիսամյակ		6. երկու ընթացիկ ստուգում	

**7. Դասընթացի նպատակն է**

- սովորողներին ներկայացնել մասնագիտության ժամանակակից հիմնախնդիրները,
- ծանոթացնել ուսուցման, դաստիարակության և կառավարման ժամանակակից մոտեցումները:

**8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- սահմանել մասնագիտության հիմնական հասկացությունները, նպատակը, խնդիրները,
- հիմնավորել կրթության արդի հիմնախնդիրների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները,
- վերլուծել կրթության զարգացման ուղիները,
- որոշարկել կրթական նոր հարացույցների դերը գիտության զարգացման գործում:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- վերլուծել կրթության կառավարման արդի հիմնախնդիրները և համադրել նորովի մոտեցումների հետ,
- գիտահետազոտական գործունեության ընթացքում կիրառել ուսումնառությամբ ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները,
- գնահատել մասնագիտության արդյունավետությունն ապահովող գործիքակազմը կրթության կառավարման համակարգում

**գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ.**

- վերլուծել կրթության արդի հիմնախնդիրները,
- բացահայտել կառավարման հիմնարար գաղափարները մասնագիտական գործունեության ընթացքում:

**9. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա1. ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

Ա4. ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով տարբեր երկրների

<p>փորձը,          Բ3. վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները          Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:</p>
<p><b>10. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ</li> <li>• ռեֆերատների ներկայացում շարժասահիկներով:</li> </ul>
<p><b>11. Գնահատման մեթոդները և չափանիշները.</b></p> <p>▪ <b>1-ին ընթացիկ ստուգում՝</b> իրականացվում է գրավոր ձևաչափով, հարց ու պատասխանի տեսքով: Քննական տոմսում ներառված է 2 տեսական հարց՝ 5-ական միավորներով:</p> <p>▪ <b>2-րդ ընթացիկ ստուգում՝</b> իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ: Առավելագույնը՝ 10 միավոր:</p>
<p><b>12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Մանկավարժության ընդհանուր հիմունքները:</li> <li>• Մանկավարժության սկզբունքները:</li> <li>• Մանկավարժության հասկացությունները:</li> <li>• Կրթական բարեփոխումները:</li> <li>• Կրթության կառավարման առանձնահատկությունները:</li> <li>• Կրթության զարգացման ուղիները:</li> <li>• Դիդակտիկա, հասկացությունները:</li> <li>• Ուսուցման կազմակերպման ձևերը:</li> </ul>

2801/Մ02	Կրթության օրենսդրություն	13. 3 կրեդիտ
----------	--------------------------	--------------

2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն
Առաջին կիսամյակ	Հանրագումարային
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորողներին ներկայացնել կրթության օրենսդրության բազային հասկացություններն ու կատեգորիաները, ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը,</li> <li>• զարգացնել սովորողների մոտ կրթական իրավահարաբերությունների նկատմամբ հետազոտական և վերլուծական գործիմացություն:</li> </ul>	
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանել կրթության օրենսդրության հիմնական գաղափարներն ու կատեգորիաները,</li> <li>• իմանալ կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները, կրթության ոլորտի միջազգային իրավական ստանդարտները (Բոլոնյան գործընթաց),</li> <li>• կարողանալ լուծում փալ կրթական գործընթացի մասնակիցների իրավահարաբերություններին վերաբերող խնդիրների,</li> <li>• նկարագրել օրենսդրության կարգավորող նշանակությունը հասարակական հարաբերություններում,</li> <li>• բացատրել կրթության օրենսդրության ազդեցությունը ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացում որակի ապահովման վրա,</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կազմել կրթական հետազոտությունների իրականացման պլան, համապատասխան հարցարաններ և հարցաթերթիկներ,</li> <li>• կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները (Arlis.am) ուսումնական հաստատությունների ուսումնադաստիարակչական գործընթացում որակի ապահովման համար,</li> <li>• փորձարկել, վերլուծել, ընդհանրացնել հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը՝ կիրառելով</li> </ul>	

կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությունը:

**14. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

1. ներկայացնել ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության մեջ ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում կրթական գործընթացի արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

2. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության օրենսդրության ճիշտ կիրարկման կարևորությունը,

3. ճիշտ արժևորել և գնահատել կրթական գործընթացի մասնակիցների իրավահարաբերությունները,

4. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

**15. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն
- ինքնուրույն աշխատանքներ

**16. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Հանրագումարային քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:

**17. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

▪ Կրթության օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:

▪ Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները:

▪ Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը:

▪ Կրթական իրավունքի պետական երաշխիքները:

▪ Կրթական համակարգը:

▪ Պետական կրթական չափորոշիչներն ու կրթական ծրագրերը:



- Կրթության ձևերը:
- Կրթության գործընթացի կազմակերպումը:
- Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացումը:
- Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը:
- Ուսումնական հաստատությունները:
- Կրթության համակարգի կառավարումը:
- Կրթական համակարգի սոցիալական երաշխիքները:
- Միջազգային համագործակցությունը կրթության բնագավառում:

2801/Մ03	Կառավարման տեսություններ	Յկրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն,	
առաջին կիսամյակ	հնրգ.	
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորողներին ներկայացնել կրթության կառավարման ժամանակակից տեսությունները,</li> <li>• վերլուծել կրթության կառավարման ժամանակակից տեսությունների իրագործման արդյունավետ մեխանիզմները:</li> </ul>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• նկարագրել կրթության կառավարման ժամանակակից տեսությունները,</li> <li>• ներկայացնել կառավարման տեսությունների փարբերություններն ու առանձնահատկությունները՝ ըստ ժամանակագրական և տիպաբանական դրսևորման:</li> <li>• հիմնավորել ճանաչողական զարգացման տեսության դերը կրթության կազմակերպման և կառավարման գործընթացում,</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծել մարդկային հարաբերությունների Մեյոյի տեսությունը,</li> <li>• արժևորել գիտական կառավարման Թեյլորի տեսությունը համեմատել կառավարման տեսությունները և փաստարկել դրանց դերը կրթության բնագավառում:</li> </ul>		

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա1. ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

Ա5. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում,

Բ1. աղյուծավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասսախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- սեմինար պարապմունք, դերային խաղեր

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Կրթության կառավարման տեսությունների համառոտ ակնարկ:
- Գիտական կառավարման Թեյլորի տեսությունը:
- Մարդկային հարաբերությունների Մեյոյի տեսությունը:
- Ա. Թոմսոնի կառավարման տեսությունը:
- Ճանաչողական զարգացման տեսություն:
- Ջոն Դյուիի տեսության հիմնական դրույթները:
- Մաքգրեգորիի կառավարման մոդելը:

2801/Մ04	Կրթության հիմունքներ	կառավարման  6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն
առաջին կիսամյակ		Եզրափակիչ գնահատումով
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել կրթության երկու մակարդակների՝ հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, գործունեության չափանիշները, կառավարման ենթահամակարգերի գործառույթները և կառավարող սուբյեկտների իրավասությունները,</li> <li>• մեկնաբանել կրթության կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդներն ու ոճերը:</li> </ul>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթանալ կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարներին, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման համար,</li> <li>• ծանոթանալ կառավարման կարևոր սկզբունքներին, գործառույթներին, մեթոդներին և ոճերին,</li> <li>• ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանց վերաբերյալ տալ սեփական մոտեցումներ:</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ստացած համապարփակ գիտելիքները կիրառել հանրակրթության և բարձրագույն կրթության կառավարման համակարգերում,</li> <li>• ճիշտ ընտրել և արդյունավետ կիրառել կրթության կառավարման գործառույթները, մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով իրավիճակային մոտեցման տեսությունը,</li> <li>• կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծում</li> </ul> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ / եթե այդպիսիք</b></p>		

**Կան/**

- կառավարչական գործողությունները վերլուծելիս հիմքում դնել երևույթների պարճառահետևանքային կապը,
- ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքի պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման, կոորդինացման գործառույթները:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա1. ներկայացնել կրթության կառավարման տեսություններում ներառված այն հիմնարար գաղափարները, որոնք հիմք են հանդիսանում արդյունավետ կառավարման և պլանավորման համար,

Ա2. սահմանել կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդները և հաղորդակցման ոճերը, էթիկայի նորմերը՝ վերարտադրելով կառավարման տարբեր իրողություններ,

Ա4. ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով տարբեր երկրների փորձը,

Բ1. աղյուսավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում,

Բ2. Կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով դիսկերը,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- սեմինար պարապմունք, դերային խաղեր:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 3 տեսական հարց՝ 2,2,1-ական միավորներով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական տոմսերով: Քննական տոմսում ներառված է 3 տեսական հարց՝ 2,2,1-ական միավորներով:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավոր:

**18. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերի նպատակը, խնդիրները, կառուցվածքը
- Կառավարման ենթահամակարգերը և կառավարող սուբյեկտների իրավասությունները
- Կառավարման սկզբունքներն ու գործառույթները
- Կառավարման մեթոդներն ու ոճերը
- Կրթական ինովացիոն գործընթացները հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում:

**3. Մասնագիտական պարտադիր դասընթացներ**

2801/Մ01	Բարձրագույն կրթության պլանավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	
Երկրորդ կիսամյակ	հանրագումարային	

**Դասընթացի նպատակն է**

- ուսանողներին ներկայացնել կառավարման ենթահամակարգերի և սուբյեկտների պլանավորման աշխատանքները,
- վերլուծել պլանավորման ընթացքում տարվող քաղաքականությունը և ռազմավարությունը բարձրագույն դպրոցում:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- նկարագրել բարձրագույն կրթության պլանավորման չափանիշները և բարձրագույն կրթության պլանավորման ընթացքն ըստ կառավարման ենթահամակարգերի,
- բացահայտել բարձրագույն դպրոցի պլանավորման առանձնահատկությունները և ռազմավարությունը,
- մշակել բարձրագույն կրթության պլանավորման չափանիշները,
- վերլուծել բարձրագույն կրթության համակարգի արտաքին և ներքին միջավայրը՝ բացահայտելով պլանավորման առանձնահատկությունները
- կանխատեսել և ախտորոշել բարձրագույն կրթության պլանավորումը խթանող և խոչընդոտող գործոնները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- հիմնավորել բարձրագույն կրթության պլանավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- գնահատել բարձրագույն կրթության կառավարման ռազմավարական պլանավորման արդյունավետությունը,
- նախագծել բարձրագույն կրթության պլանավորման ռազմավարության քայլերը և կանխատեսել վերջնարդյունքները,
- կազմել բարձրագույն կրթության ռազմավարական պլան՝ հաշվի առնելով արդի զարգացումները,
- կազմել բուհի առանձին մասնագիտության ուսումնական և աշխատանքային պլաններ, առանձին ամբիոնի տարեկան բեռնվածություն:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փայլ համապատասխան լուծումներ,

Ա5. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում:

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կոորդինացման գործառույթներ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- ռեֆերատներ, ներկայացումներ, քննարկումներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական տոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Բարձրագույն կրթության պլանավորումը ՀՀ կրթության պլանավորման ենթաֆեքսսում:
- Ռազմավարական պլանավորման գործիքամիջոցները:
- ԵՊՀ արտաքին միջավայրի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն:
- ԵՊՀ ներքին միջավայրի վերլուծություն:
- Պլանավորման չափանիշները:
- ԵՊՀ կառավարման ենթահամակարգերին համապատասխան պլանավորման առանձնահատկությունները:
- Բուհ-ի գործող ռազմավարության վերլուծություն:
- Ռազմավարական պլանի մոնիթորինգ:

2801/Մ02	Հանրակրթության պլանավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն
Երկրորդ կիսամյակ		Հանրագումարային
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսանողներին ներկայացնել կառավարման ենթահամակարգերի և սուբյեկտների գործունեության պլանավորումը հանրակրթության ոլորտում՝</li> <li>• վերլուծել պլանավորման ընթացքում տարվող քաղաքականությունը և ռազմավարությունը:</li> </ul>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• նկարագրել հանրակրթության պլանավորման չափանիշները և հանրակրթության պլանավորման ընթացքն ըստ կառավարման ենթահամակարգերի,</li> <li>• բացահայտել հանրակրթական դպրոցի պլանավորման</li> </ul>		



առանձնահատկությունները և ռազմավարությունը,

- մշակել հանրակրթության պլանավորման չափանիշները,
- վերլուծել հանրակրթության համակարգի արտաքին և ներքին միջավայրը՝ բացահայտելով պլանավորման առանձնահատկությունները
- կանխատեսել և ախտորոշել հանրակրթության պլանավորումը խթանող և խոչընդոտող գործոնները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- հիմնավորել հանրակրթության պլանավորման կարևորությունն ու անհրաժեշտությունը,
- մշակել պլանավորման չափանիշները՝ քննարկելով գործիքակազմը,
- գնահատել հանրակրթության կառավարման պլանավորման արդյունավետությունը,
- նախագծել հանրակրթության ենթահամակարգերի պլանավորումը և կանխատեսել վերջնարդյունքները,
- կազմել հանրակրթության զարգացման պլան՝ հաշվի առնելով արդի զարգացումները,

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծումներ,

Ա5. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում:

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կոորդինացման գործառույթներ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- ռեֆերատների ներկայացումներ, նախագծեր:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով, քննական փոմսերով: Առավելագույնը 20 միավոր արժեքով :

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- ՀՀ կրթության պլանավորում:
- Ռազմավարական պլանավորման գործիքամիջոցները:
- Հանրակրթության պլանավորման միջոցները և գործիքակազմը:
- Արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն:
- Հանրակրթության պլանավորման չափանիշները:
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում:

2801/Մ03	Կրթության որակի ապահովում և վերահսկողություն	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն
Երկրորդ կիսամյակ		Եզրափակիչ գնահատումով

**Դասընթացի նպատակն է.**

- ուսանողներին ներկայացնել կրթության որակի ապահովման խնդիրները՝ փալով որակի համաեվրոպական սահմանումները,
- մեկնաբանել կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները:
- ներկայացնել որակի ներքին և արտաքին վերահսկողության համակարգերը, հավաքարմագրում, նպատակը, խնդիրները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- ծանոթանալ որակի համաեվրոպական սահմանումներին՝ տալով դրանց վերլուծությունները,
- մեկնաբանել կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները,  
վերլուծել որակի գնադրման մոտեցումներն ու մոդելները:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- սրացած համակարգված գիտելիքները կիրառել կրթության որակի ապահովման և վերահսկողության գործընթացում,
- վեր հանել և շտկել այն բոլոր դժվարություններն ու խնդիրները, որ կարող են ծագել որակի ներքին ապահովման ներհամալսարանական համակարգի գործառույթներում

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ /Եթե այդպիսիք կան/**

- որակի արտաքին վերահսկողության համակարգի գործունեության վերլուծության արդյունքում բացահայտել կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը:
- կարևորել և հիմնավորել կրթության որակի միջազգային հավաստագրման դերը կրթության համակարգի զարգացման գործում:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

- Ա5. կրթության կառավարման արդյունավետության հարցում հիմնավորել կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում,
- Ա6. կրթության արդյունավետ կառավարման համակարգում կարևորել կրթության ներքին և արտաքին որակի ապահովման և վերահսկողության հարաբերակցությունը,
- Բ2. կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, փալ համապատասխան

լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով՝ 5 միավորով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է բանավոր ձևաչափով՝ 5 միավորով:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով: Առավելագույնը 10 միավորով:

**19. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Կրթության որակի համաեվրոպական սահմանումները
- Կրթության որակի ապահովման ներքին և արտաքին գործոնները
- Որակի ապահովման ներհամալսարանական համակարգի նպատակը, խնդիրները, գործառույթները
- Որակի գնահատման մոտեցումները
- Որակի գնահատման մոդելները:
- Որակի ներքին վերահսկողություն իրականացնող ենթահամակարգերը և սուբյեկտները
- Որակի արտաքին վերահսկողության համակարգերը, մեխանիզմները. հավատարմագրում, նպատակ, խնդիրները
- Դասախոսական կազմի որակի գնահատում
- Ուսանողության որակի գնահատում
- Ուսումնական ծրագրերի որակի գնահատում

2801/Մ05	Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը և հանրակրթական դպրոցում	6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	

Երկրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ծանոթացնել սովորողներին ներդպրոցական կառավարման ամբողջական համակարգին,</li> <li>• ներկայացնել ուսումնական և դաստիարակչական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում:</li> </ul>	
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանել ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման հիմնական հասկացությունները</li> <li>• ներկայացնել ներդպրոցական կառավարման ենթահամակարգերը և սուբյեկտները,</li> <li>• մատնանշել ներդպրոցական կառավարման առավել արդյունավետ գործառույթները,</li> <li>• հիմնավորել աշակերտական ինքնավարության դերը ներդպրոցական կառավարման համակարգում</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծել ներդպրոցական կառավարման սուբյեկտների իրավասություններն ու պարտականությունները,</li> <li>• ներկայացնել հանրակրթական դպրոցի ժողովրդավարացման էությունը, ուսումնական աշխատանքներում՝ համագործակցային ուսուցման և համագործակցային աշխատանքի կարևորությունն ու արդյունավետությունը:</li> <li>• արժևորել ներդպրոցական կառավարման համակարգում դաստիարակչական, արտադասարանական աշխատանքների դերը սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում,</li> <li>• գնահատել դպրոց-համայնք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում,</li> </ul> <p><b>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• շեշտադրել դաստիարակչական-համագործակցային աշխատանքների անհրաժեշտությունն ու արդյունավետությունը</li> </ul>	

կառավարման գործում:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,

Բ1. աղյուսավետ կիրառել կրթության կառավարման մեթոդներն ու միջոցները՝ հաշվի առնելով կառավարման իրավիճակային մոտեցման տեսությունը հանրակրթության համակարգում,

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ դպրոցում իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորդինացման գործառույթներ

Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ, դերային խաղեր, համագործակցային մեթոդներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական փոմսերով: Առավելագույնը՝ 5 միավոր:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները, նախապես ընտրված թեմաներից, ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ: Առավելագույնը՝ 5 միավոր:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական փոմսերով: Առավելագույնը՝ 10 միավոր:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Ժողովրդավար դպրոցի գործունեության նպատակը, խնդիրները, զարգացման հեռանկարները:

- Ներդպրոցական կառավարման սկզբունքները, գործառույթները:

- Ներդպրոցական կառավարման մեթոդները:

- Կառավարման ընդհանուր և անհատական ոճերի հարաբերակցությունը:

- Դպրոցի կառավարման բարձրագույն մարմին. դպրոցական խորհուրդ, իրավասությունները:

- Կառավարման սուբյեկտներ: Դաստիարակչական աշխատանքի գծով փոխարններ:

- Կրթական աջակցությունների գծով փոխարններ:

- Մանկավարժական խորհուրդ, իրավասությունները:

- Առարկայական հանձնախմբերի գործունեությունը:

- Ուսումնական աշխատանքների վերահսկողության ձևերը, իրականացման ուղիներ:

- Տնօրեն-աշակերտ համագործակցությունը, աշակերտական ինքնավարություն:

- Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը դպրոցի կառավարման համակարգում:

- Դաստիարակչական իրավասություններն ու պարտականությունները:

- Արտադասարանական դաստիարակչական միջոցառումներն աշակերտների ինքնաձանաչման, ինքնաիրացման և ինքնագնահատման եղանակ:

- Արտադպրոցական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողությունը

- Դպրոց-ընտանիք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում:

- Դպրոց-համայնք համագործակցությունը դաստիարակչական աշխատանքների կառավարման համակարգում:

- Գրադարանը դպրոցի դաստիարակչական աշխատանքի կառավարման ենթահամակարգ:

2801/Մ1	Կառավարման հոգեբանություն	Յկրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	
երրորդ կիսամյակ	Հանրագումարային	
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսումնասիրել կրթության կառավարման ոլորտի ղեկավարի, ձեռներեց-ղեկավարի, լիդերի, ձեռներեցության, ինչպես նաև՝ լիդերության կենսաբանական և սոցիալական, նաև՝ պաթոլոգիական կողմի հոգեբանական հիմքերը:</li> <li>• փոխանցել գիտելիքներ աշխարհի առաջատար երկրների կրթության կառավարչական գործունեությունում ղեկավարի հոգեբանական առանձնահատկությունների, վարքային մակարդակում ներգործության մեխանիզմների, կազմակերպչական վարքի կառավարման կոգնիտիվ ու վարքային մոտեցումների վերաբերյալ, հաշվի առնելով արդյունավետ վարքի բաղադրիչները և հիմնական դրույթները</li> <li>• ծանոթացնել կառավարման տարբեր գործնական և թրենինգային մոտեցումներին, ռիսկի գնալու ներքին պատրաստակամության ակտիվացմանն ուղղված հոգեբանական վարժություններին:</li> </ul>		
<p><b>20. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• բացատրել կրթության ոլորտի կառավարման արդյունավետություն ապահովող գործոնների հոգեբանական, սոցիալ-կենսաբանական կողմը,</li> <li>• վերլուծել կառավարման այլ երկրների, մշակույթների փորձը, արդյունավետ ներգործության հոգեբանական մեխանիզմները,</li> <li>• ներկայացնել մարդկանց մոտիվացնելու, կազմակերպելու և ղեկավարելու զարգացմանն ուղղված հոգեբանական մեթոդները:</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p>		



- կիրառել հոգեբանական (տեսական և գործնական) գիտելիքները թրենինգային, հետազոտական աշխատանքներ կազմակերպելիս,
- վերլուծել կառավարման հոգեբանական առանձնահատկությունները՝ կրթության տեղական և համաշխարհային գործընթացների համատեքստում,
- ցուցաբերել անհրաժեշտ հմտություններ մարդկանց կառավարելու և իր հետևից տանելու առանձնահատկության, անձի արդարացված ռիսկի զարգացման հետ կապված հոգեբանական վարժությունների իմացության,
- իրականացնել գործնական աշխատանքներ անձի մակարդակում մարդկանց կառավարելու, լիդերության հատկության դրսևորում և զարգացում ապահովելու համար:

**գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)**

- կիրառել գիտելիքները պրակտիկայում,
- բացահայտել արդյունավետ կառավարման դրսևորմանը խոչընդոտող հոգեբանական գործոնները,
- կազմակերպել հոգեբանական վարժանքների շարք՝ կիրառելով հոգեբանական տեխնիկաներ կառավարման հոգեբանական կողմը մշակելիս:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա4. ճանաչել և քննարկել կրթության կառավարչական գործընթացները, դրանցում եղած գործոնները՝ ներկայացնելով փարբեր երկրների փորձը,

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորրեկցիանցման գործառույթներ,

Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ, քննարկումներ,
- թրենինգային ծրագրերի քննարկումներ, դերային խաղեր:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Ղեկավարման-ձեռներեցության-լիդերության հոգեբանական հիմքերը
- Ժամանակակից արդյունավետ ղեկավար-լիդերի հոգեգրամման
- Ղեկավարի ինքնադրսևորում, ինքնիրացում
- Կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտ
- Կառավարման էթնոհոգեբանական կողմը
- Կառավարմանն ուղղված հոգեբանական տեխնիկաներ

2801/Մ01	Կրթական քաղաքականություն ու նազնավարություն	<b>21.</b> 3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	
Երրորդ կիսամյակ	հանրագումարային	
<b>Դասընթացի նպատակն է.</b> <ul style="list-style-type: none"> <li>• սովորողներին ներկայացնել կրթական քաղաքականությունը,</li> <li>• ՀՀ կրթության ոլորտում իրականացվող նազնավարությունը:</li> </ul>		
<b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b> <b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b> <ul style="list-style-type: none"> <li>• գիտակցել և վերարտադրել կրթական քաղաքականության նպատակն ու խնդիրները,</li> <li>• սահմանել կրթական քաղաքականության սկզբունքները,</li> <li>• հիմնավորել սուբյեկտների դերը կրթական քաղաքականության համակարգման գործում,</li> <li>• քննարկել կրթական քաղաքականությունը պայմանավորող գործոնները,</li> <li>• գիտակցել և բացատրել կրթական քաղաքականության և նազնավարության փոխառնչությունները,</li> <li>• նկարագրել նազնավարության հիմքում ընկած ժամանակակից հիմնախնդիրները,</li> <li>• որոշել նազնավարության բաղադրիչները,</li> </ul> <b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b> <ul style="list-style-type: none"> <li>• փաստարկել կրթական քաղաքականության իրականացման ուղիները,</li> <li>• կիրառել նազնավարական պլանավորման գործիքավորումները,</li> <li>• փորձարկել նազնավարության կազմման չափանիշները,</li> <li>• վերլուծել բուհի գործող նազնավարության և զարգացման նազնավարության առանձնահատկությունները,</li> <li>• իրականացնել բուհի գործող նազնավարության և զարգացման</li> </ul>		

նագնավարության փորձագիտական գնահատում:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա5. հիմնավորել կրթության կառավարման արդյունավետության հարցում կրթության բարձր որակի ապահովման խնդիրը՝ կանխատեսելով կրթության ոլորտի առջև ծառայած մարտահրավերները կրթական քաղաքականության պլանավորման և իրականացման արդյունքում:

Բ3. վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները, գնահատման ժամանակակից միջոցներ,

Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- գործնական աշխատանքներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

- **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով: Առավելագույնը՝ 20 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Կրթական քաղաքականության էությունը, դրա տեսական ու հայեցակարգային հիմքերը:
- Կրթական քաղաքականության նպատակը, խնդիրներն ու բաղադրիչները:
- Կրթական քաղաքականության սուբյեկտները: Կրթական քաղաքականության սկզբունքներն ու իրականացման ուղիները:
- Տարբերակված կրթական քաղաքականություն ՀՀ հանրակրթության, բարձրագույն կրթության, հեփբուհական և շարունակական կրթության ոլորտներում. ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն:
- ՀՀ կրթական քաղաքականությունը պատմական, քաղաքական, սոցիալական, մշակութային և փնտեսական համատեքստերում:
- Կրթական քաղաքականության և ուսումնականության փոխադասմանավորվածությունը:
- Կրթական քաղաքականության ուսումնական պլանավորում:
- Կրթական ուսումնականության կազմման մեթոդաբանությունները:
- ՀՀ կրթական ուսումնականության ժամանակակից մարտահրավերները:
- Կրթության ժողովրդավարացման և ժողովրդավարական կրթության հիմնահարցերը փոխակերպվող հասարակությունում. մասնակցային կրթական քաղաքականություն:
- Համակարգային մոտեցման կիրառումը կրթական քաղաքականության վերլուծություններում:
- Կրթական գործող ուսումնականություն և զարգացման ուսումնականություն. փորձագիտական գնահատում:

2801/Մ01	Կրթության փիլիսոփայություն	22. 3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն

Երրորդ կիսամյակ	Հանրագումարային
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորողներին ներկայացնել կրթության փիլիսոփայական հիմնախնդիրները</li> <li>• կրթության ու փիլիսոփայության առնչությունները:</li> </ul>	
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հասկանալ կրթության մասին տարբեր փիլիսոփայական մոտեցումների էությունը,</li> <li>• սահմանել կրթության և փիլիսոփայության առնչությունները,</li> <li>• բացատրել գիտելիքի մասին տարբեր փիլիսոփայական մոտեցումների առանձնահատկությունները,</li> <li>• նկարագրել կրթության ճգնաժամի մասին տարբեր փիլիսոփայական տեսություններ,</li> <li>• մեկնաբանել տեխնոլոգիական զարգացումների ազդեցությունը կրթության վրա:</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կազմել կրթության փիլիսոփայական խնդիրների ցանկ և դասակարգել դրանք ըստ կարևորության,</li> <li>• կիրառել ձեռք բերած գիտելիքները Հայաստանի կրթական համակարգի խնդիրների լուծումներ առաջարկելու նպատակով:</li> <li>• ներկայացնել կրթության փիլիսոփայական նախընտրելի մոտեցումները և հիմնավորել դրանց կարևորությունը:</li> </ul>	
<p><b>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p>Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում,</p> <p>Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:</p> <ul style="list-style-type: none"> <li>•</li> </ul>	

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն
- ինտերակտիվ ուսուցում՝ խճանկար, բանավեճ, քննարկում
- նախագծային ուսուցում

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ Առավելագույնը՝ 20 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Կրթության փիլիսոփայության առարկան:
- Տեխնոլոգիական զարգացման փիլիսոփայական մեկնաբանությունները և դրանց առնչությունը կրթության հետ:
- Կրթության փիլիսոփայության հիմնական տեսությունները:
- Գիտելիքը և դրա ձեռքբերման եղանակները կրթության փիլիսոփայության տեսանկյունից:
- Արհեստական ինտելեկտի ազդեցությունը կրթության համակարգի վրա:

2801/Մ01	Կրթության ֆինանսավորում	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	
Երրորդ կիսամյակ	հանրագումարային	

**Դասընթացի նպատակն է՝**

- սովորողներին ծանոթացնել ՀՀ բյուջետային համակարգին, իրավունքներին, բյուջետային գործընթացներին,
- ներկայացնել ՀՀ կրթության ֆինանսավորման մեխանիզմները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- ներկայացնել ՀՀ պետական բյուջեի կառուցվածքը և կրթության ոլորտի ֆինանսավորումը,
- սահմանել կրթության ոլորտին ներկայացվող ֆինանսական հոսքերի տեղաշարժը,
- նկարագրել կրթության ոլորտում ֆինանսավորման պետական քաղաքականությունը
- դասակարգել հանրակրթության և ներառական ուսուցմամբ դպրոցների ֆինանսավորման հիմնական առանձնահատկությունները

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- նախագծել հանրակրթական հաստատության տարեկան բյուջեն,
- վերլուծել դպրոցի ֆինանսական հոսքերի տեղաբաշխումը,
- առաջարկել դպրոցի ֆինանսական հոսքերի ավելացման նոր նախագծեր,
- գնահատել ֆինանսական միջոցների դերը կրթության զարգացման գործընթացում՝ հաշվի առնելով ռիսկերը:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և տալ համապատասխան լուծումներ,

Բ2. վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը,

Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:



**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- ռեֆերատներ, ներկայացումներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավոր:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- ՀՀ կրթության համակարգի ֆինանսավորման հիմնական ձևերը:
- ՀՀ օրենսդրական դաշտը կրթության ֆինանսավորման մասին:
- Ուսանողական վարկային համակարգերի ներդրման մեխանիզմները:
- Ուսանողական նպաստների տրամադրման կանոնակարգերը և հաշվարկային ձևերը:
- Նախահաշիվ, ժամանակացույց, քաղվածք պայմանագրից:
- Կրթական հաստատության ներկայացրած ֆինանսական հաշվետվությունների կազմում և դրանց վերլուծություն:
- Սովորողների ֆինանսավորման հաշվարկային թվակազմի բանաձև:

2801/Մ01	Մարդկային կառավարում, 3 կրեդիտ	ռեսուրսների <b>23.</b> 3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն
Երրորդ կիսամյակ		հնրգ.
Դասընթացի <b>նպատակն</b> է ուսանողներին ներկայացնել <ul style="list-style-type: none"> <li>• ժամանակակից պայմաններում մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները կրթական համակարգում,</li> </ul>		

- կարերիայի կառավարման ժամանակակից ձևերն և մեխանիզմները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- մեկնաբանել աշխատանքի կառավարման փիլիսոփայական հիմքերը,
- սահմանել կառավարման բարոյական վարքականոնները,
- արժևորել մարդկային ռեսուրսների դերը և կարևորությունը կառավարման գործընթացում:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- վերլուծել կորպորատիվ մշակույթի ձևավորման, մարդկային ներուժի և առանցքային հմտությունների, կարողությունների կազմակերպման ու պլանավորման հիմնահարցերը, մարդկային ռեսուրսների /անձնակազմի կառավարման հիմնական գործառույթները
- կիրառել կոնֆլիկտների լուծման արդյունավետ մեխանիզմներ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում,
- որոշել թեկնածուների համալրման, վերապատրաստման ու մասնագիտական զարգացման աղբյուրները,
- գործնականում կազմել մասնավոր դեպքերի հետազոտության պլան-ծրագրեր,
- իրականացնել կարիերայի պլանավորման արդյունավետ և գործուն մեխանիզմներ:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորրեկցիանցման գործառույթներ,

Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ, ուսումնառության ինտերակտիվ մեթոդներ

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Մարդկային ռեսուրսների ուղղակի կառավարում:
- Աշխատակազմի համալրում:
- Աշխատակազմի կարարողականի կառավարում:
- Աշխատանքային հարաբերությունների կարգավորում:
- Վերապատրաստում և մասնագիտական զարգացում:
- Կազմակերպական մշակույթ:
- Կոնֆլիկտների կառավարում:

2801/Մ01	Ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքները	3 կրեդիտ
2 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն,	
երրորդ կիսամյակ	հանրագումարային	
Դասընթացի նպատակն է		

- ուսանողներին ծանոթացնել ուսումնական ծրագրերի կազմման հիմնական սկզբունքներին, առանձնահատկություններին,
- ներկայացնել ուսումնական ծրագրերի կազմման ժամանակակից պահանջները:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

**ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- ներկայացնել ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքները,
- լուսաբանել կրթական և ուսումնական ծրագրերի առանձնահատկությունները,
- վերլուծել ծրագրերին ներկայացվող ժամանակակից պահանջները,

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- գնահատել և գործնականում կիրառել ուսումնական ծրագիրը,
- համադրել ուսումնական ծրագրի կազմման փարբերակները,
- փարբերակել ուսումնական ծրագրի կազմման մեթոդական մասը. դասավանդման մեթոդներ, ուսումնառության և ստուգման մեթոդներ:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Ա3. կանխատեսել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել ուսումնական ծրագրերի կազմման, պլանավորման, կառավարման գործընթացում և փալ համապատասխան լուծումներ,

Բ4. ճիշտ արժևորել և գնահատել կոլեկտիվի անդամների ներուժը, առկա խնդիրները և ըստ այդմ էլ իրականացնել կառույցի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, կարգավորման և կորրոկինացման գործառույթներ,

Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ
- գործնական աշխատանքներ, սեմինար պարապմունքներ

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **Եզրափակիչ քննություն**՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 20 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Կրթական ծրագրի և ուսումնական ծրագրի հարաբերակցությունը, հիմնական տիպերը:
- Ուսումնական ծրագրերի կառուցվածքը, տիպաբանությունը:
- Ուսումնական ծրագրերի կազմման ժամանակակից սկզբունքները:
- Ուսումնական ծրագիր. բացատրական մաս:
- Ուսումնական ծրագիր. բովանդակային մաս:
- Ուսումնական ծրագրի կազմման մեթոդական մաս. դասավանդման մեթոդներ, ուսումնառության և ստուգման մեթոդներ:
- Գրականության ցանկին ներկայացվող պահանջներ:
- Ուսումնական ծրագրի կազմման տարբերակներ:

2801/Մ01	<b>Կրթական հետազոտությունների գնահատում, 6 կրեդիտ</b>	<b>24.</b> 6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ		30 ժամ դասախոսություն 30 ժամ գործնական սեմինար
Երրորդ կիսամյակ		Եզրափակիչ գնահատումով
<b>Դասընթացի նպատակն է</b> <ul style="list-style-type: none"><li>• սովորողներին ներկայացնել կրթական հետազոտությունների</li></ul>		

տվյալների մշակումը,

- վերլուծել ու ներկայացնել գնահատման առանձնահատկությունները,
- զարգացնել սովորողների վերլուծական և փորձագիտական գնահատման գործիմացությունը:

### **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

#### **ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- գիտակցել և վերարտադրել հեղափոխությունների գնահատման առանձնահատկությունները,
- սահմանել կրթական հեղափոխությունների իրականացման հիմքում ընկած հիմնարար սկզբունքներըն ու չափանիշները,
- նկարագրել հեղափոխությունների գնահատման մոդելները,
- բացատրել կրթական հեղափոխությունների գնահատման ընթացակարգերը,

#### **բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- մշակել կրթական հեղափոխությունների տվյալները, իրականացնել վերլուծություն և ներկայացնել արդյունքները՝ ելնելով կրթական հեղափոխությունների գնահատման չափանիշներից,
- կազմել և կիրառել կրթական հեղափոխությունների գնահատման գործիքավորումներ, ընտրել հիպոթեզի ստուգման հարմարավետ մոդել,
- փորձարկել հայտնաբերությունների հուսալիության, վերարտադրելիության կամ հիմնավորվածության, ինչպես նաև հեղափոխության արդյունքների հավաստիության որակի գնահատման ձևերը,
- փորձարկել կրթական հեղափոխությունների արդյունքների վերլուծության տարբերակները:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

*Բ2. կանխատեսել և վերլուծել այն դժվարությունները, որոնք կարող են ծագել կառավարման գործընթացում, տալ համապատասխան լուծումներ՝ հաշվի առնելով ռիսկերը,*

*Բ5. կազմել և գործնականում կիրառել կրթական հետազոտությունների իրականացման տարատեսակ գործիքակազմեր,*

*Գ1. արդյունավետ պլանավորել ժամանակն ու ռեսուրսները կրթության կառավարման գործում:*

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ,
- գործնական աշխատանքներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

▪ **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական ու, 5 միավորով:

▪ **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները նախապես ընտրված թեմաներից ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:

▪ **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

▪ Կրթության ոլորտում հետազոտությունների գնահատման հիմնախնդիրն ու նպատակները:

▪ Կրթական հետազոտությունների իրականացման հիմնարար սկզբունքները:

▪ Հիպոթեզի ստուգման հարմարավետ մոդելի կիրառում:

▪ Հայտնաբերությունների հուսալիության, վերարտադրելիության

կամ հիմնավորվածության, ինչպես նաև հետազոտության արդյունքների հավաստիության որակի գնահատման ձևերը:

- Հետազոտությունների ընթացքում հավաքագրած տվյալների մշակում, վերլուծություն ու ներկայացում:

- Հետազոտության գնահատման մոդելները:

- Հետազոտության գնահատման գործիքավորումների կազմում:

- Հետազոտության մոնիտորինգի առանձնահատկություններն ու ընթացակարգերը:

- Հետազոտության արդյունքների վերլուծություն և դրա հնարավոր փարբերակները

- Հետազոտական-փորձագիտական գնահատման դերը կրթության համակարգի կարարելագործման գործում:

2801/Մ01	Դասական և ժամանակակից գնահատման և թեստավորման տեսություններ, 6 կրեդիտ	25. 6 կրեդիտ
4 ժամ/շաբաթ	30 ժամ դասախոսություն	
Երրորդ կիսամյակ	Եզրափակիչ գնահատումով.	
<p><b>Դասընթացի նպատակն է</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել ուսումնական արդյունքների գնահատման և թեստավորման արդի տեսությունները,</li> <li>• ծանոթացնել գնահատող թեստերի կազմման հիմնական մոտեցումներին, վերլուծել դրանց առանձնահատկությունները, տեսակները և իրագործման տեխնոլոգիաները:</li> </ul>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանել ուսումնառության արդյունքների գնահատման թեստերի հիմնական տեսակները,</li> </ul>		



- մեկնաբանել գիտելիքների գնահատման և թեստավորման արդի տեսությունները,

- վերլուծել տարբեր տեսակի թեստերի կազմման հիմնական սկզբունքները և դրանց կիրառման ձևերը,

- արժևորել թեստավորման ժամանակակից միջոցների արդյունավետությունը կրթական գործընթացում:

**բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- համեմատել ուսումնառության արդյունքների գնահատման ավանդական և ժամանակակից միջոցները և հիմնավորել դրանց կիրառման արդյունավետությունը,

- որոշել թեստերի կազմման արդյունավետ եղանակները և դրանց հարմարավետ կիրառությունն ուսումնական գործընթացում,

- գործնականում կազմել ուսումնառության արդյունքների գնահատման թեստեր,

- ստեղծել ուսումնառության արդյունքների գնահատման ավտոմատացված թեստեր iSpring Sute, Google Survey համակարգերի օգնությամբ:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

Բ3. վերլուծել կրթական քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմները, գնահատման ժամանակակից միջոցներ,

Գ2. կիրառել ստացած գիտելիքները պրակտիկ գործունեության մեջ,

Գ4. կիրառել S<S-ները մասնագիտական խնդիրներում:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ

- գործնական աշխատանքներ՝ առցանց և ոչ առցանց ռեժիմներում

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

- **1-ին ընթացիկ քննություն՝** իրականացվում է գրավոր ձևաչափով, քննական 2-ական 5 միավորով:
- **2-րդ ընթացիկ քննություն՝** իրականացվում է գործնական ներկայացման միջոցով: Սովորողները նախապես ընտրված թեմաներից ներկայացնում են ռեֆերատներ՝ շարժասահիկների ուղեկցությամբ:
- **Եզրափակիչ քննություն՝** իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ քննական տոմսերով: Առավելագույնը՝ 10 միավորով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

- Դասական և ժամանակակից գնահատման և թեստավորման տեսություններ առարկայի նպատակը, խնդիրները:
- Գիտելիքների գնահատման ավանդական և ժամանակակից մեթոդները:
  - Մանկավարժական չափումները, նրա մակարդակներն ու բաղադրիչները:
